



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### «Ճանաչողական» այցերից՝ ճանաչում

Վերջին շրջանում հայ-ադրբեջանական սահմանում տեղի ունեցած նոր զարգացումները ցույց տվեցին, որ Ադրբեջանը մտադիր չէ հրաժարվել իր կողմից որդեգրած սահմանի և ահաբեկչական գործողություններից՝ ուղղված ոչ միայն սահմանին կանգնած հայ զինվորի, այլև հայ ազգաբնակչության հանդեպ թե՛ ԼՂՀ-ում, թե՛ ՀՀ-ում:

Սահմանային եւ խաղաղ բնակչության հանդեպ տեղի ունեցած ահաբեկչությունը բացահայտորեն կատարվեց հայտնի քաղաքական հանդիպումների խորապատկերի վրա. Լավրովի՝ Ադրբեջան այցելության անմիջապես պատասխանը եղավ Ադրբեջանի նախահարձակ պոռթկումը շփման գծում, ինչը Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ստեղծեց գերլարված մթնոլորտ: Շատերը սկսեցին խոսել ու խոսում են պատերազմի հնարավոր վերսկսման մասին, եւ պարզ չէ, թե դեպի ուր կտանի իրավիճակի տեւական սրումը: Համենայնդեպս, ԼՂՀ ՊՆ-ն իր հայտարարության մեջ հուշեց Ադրբեջանին, որ նման կերպ շարունակելու դեպքում վիճակն ավելի կբարդանա հատկապես իր՝ Ադրբեջանի համար:

Չնայած այն հանգամանքին, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը փորձեց ինչ-որ կերպ արձագանքել կատարվածին, սակայն այս անգամ եւս նա գերծ մնաց հասցեագրված գնահատումից: Հավասարության նշանն այս անգամ էլ դրվեց նույն՝ սխալ տեղում:

Այս ամենով հանդերձ, մինչ Ադրբեջանը սահմանային սադրանքներով էր զբաղված, բարձր ամբիոններից քննադատության խոսքեր էին հնչում ալիեյան բռնակարգերի մասին: Գլխավորապես՝ Եվրոխարիզարանի կողմից ընդունվեց ալիեյան բռնապետական վարչակարգը քննադատող բանաձեւը, որ այդ երկիրը հիշատակվում է որպես մարդկային իրավունքների ու ազատությունների ոտնահարման թատերաբեմ:

Այդ ամենի ֆոնին կազմակերպվեցին մի շարք քաղաքական գործիչների այցելություններն Արցախ: Ընդամենը մի քանի օրերի ընթացքում Արցախ այցելեցին երեք պատվիրակություններ՝ ՀՀ-ի Եվրոպայի Հայ դատի գրասենյակի նախաձեռնությամբ՝ Ֆրանսիայի եւ Բելգիայի խորհրդարանականների, ԱժԿ հրավերով՝ «Եւրոպական ազատ դաշինքի»: Առջեւում են նաեւ ԼՂՀ ԱԳՆ նախաձեռնությամբ կայանալիք ֆրանկոֆոնիայի օրերն Արցախում:

Այս այցերի ընթացքում Արցախում գտնվող խորհրդարանականները բացեիբաց խոսեցին ու դատապարտեցին Ադրբեջանի կողմից տարվող քաղաքականությունը թե՛ սահմանին, թե՛ սեփական երկրում: Արցախ այցելած բելգիացի խորհրդարանականը ոչ միայն ողջունեց Ադրբեջանի հանդեպ Եվրոխորհրդարանի որոշումը, այլև սթափության կոչ արեց այդ երկրի իշխանություններին՝ շեշտելով, որ այնտեղ բռնապետական նկրումները խորանում են, եւ որքան խորանում, այնքան ավելի քիչ հույս կա, որ երկիրը կբռնի ժողովրդավարության ուղին:

Մինչ ադրբեջանական իշխանությունները փորձում են իրենց երկրում տիրող խայտառակ իրավիճակն ու սեփական քաղաքացիների պոռթկումները գապել, նրանց ուշադրությունը շեղել ադրբեջանա-դարաբաղյան սահմանային լարվածությամբ, Արցախը համալրում է իր բարեկամական շրջանակը նոր բարեկամներով ու նոր այցելուներով, ովքեր, այցելելով Արցախի Հանրապետություն, իրենց իսկ ներկայությամբ փաստում են Արցախի անկախ Հանրապետության լինելիության անժխտելի իրողությունը, ինչպես նաեւ նրա ճանաչումը մոտ ապագայում դարձնելով անխուսափելի գործընթաց:

Արցախի ժողովուրդն արդեն վաղուց ընտրել է իրեն արժանի ճանապարհը: Ամեն մի արցախցի, անկախ քաղաքական դիրքորոշումներից, ունի մեկ գերնպատակ՝ իր երկրի անվտանգությունը, եւ դա գիտակցում են նաեւ այստեղ այցելողները: Ուստի, այս եւ նման այցելությունները նաեւ բարոյական պատասխանատվություն եւ պարտավորություն են ներկայացնում հենց իրենց՝ այցելուների համար՝ «ճանաչողական» այցերից անցում կատարելու գործնական լուրջ քայլերի:



## Դավիթ Իշխանյանն անդրադարձել է սահմանային լարվածությանը

ՀՀ Կրկնակցության ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանի խոսքերով՝ վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանային լարված իրավիճակի պատասխանատվությունը հավասարաչափ կրում են եւ՛ ադրբեջանական կողմը, եւ՛ միջազգային կառույցները:

«Հայկական կողմը բազմիցս թե՛ ահազանգել, թե՛ ուղղակի զգուշացրել է միջազգային կառույցներին՝ Ադրբեջանի կողմից սահմանային նման իրավիճակ ստեղծելու մասին, կոչ արել նրանց՝ պատասխանատվության եկաթնալարի եւ որոշ ճնշումներ գործադրել: Սակայն, կարծես թե, այս ամենը դուրս են միջազգային հանրության եւ, հատկապես, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ուշադրությունից, ովքեր, ունենալով իրական լծակներ ադրբեջանական կողմի վրա ազդելու համար, հաճախ հանդես են գալիս չեզոք դիրքորոշումներով: Դրա

փոխարեն՝ միջազգային կառույցներն իրենց հայտարարություններում հավասարության նշան են դնում կողմերի միջև՝ համահավասար պատասխանատվության կոչ անելով»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Դավիթ Իշխանյանը:

Դ. Իշխանյանի կարծիքով՝ վերջին օրերի լարվածությունը հավանաբար պայմանավորված է Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրություններով: Քաղաքական այդ անցուդարձից Ադրբեջանը ցանկանում է հանրության ուշադրությունը շեղել եւ սլաքն ուղղել դեպի ճակատ՝ շրջանցելով ներքին ճակատի հիմնախնդիրները:

«ԼՂՀ ՊՆ-ն տվել է համապատասխան նախազգուշացնող հայտարարություն, եւ այսպիսի իրավիճակի շարունակվելու դեպքում, կարծում եմ, անհրաժեշտ է լինելու ավելի վճռական եւ կոնկրետ գործողություններ իրականացնել»,- ավելաց-

րել է Դավիթ Իշխանյանը:

Վերջերս ճակատային գծում նկատելի է նոր, ավելի մեծ տրամաչափի զինատեսակների օգտագործում, հատկապես՝ թուրքական արտադրության: Այդ մասին Դավիթ Իշխանյանը նշել է. «Թուրքիան վերջին տարիներին ոչ միայն քաղաքական առումով է փորձում դերակատար լինել դարաբաղյան հիմնահարցի կարգավորման ուղղությամբ, այլև ռազմական փորձագետների եւ համապատասխան համագործակցության դրսեւորման ակնհայտ ցուցադրություն է այն, որ ռազմաճակատում արդեն երեւան են գալիս թուրքական զինատեսակներ: Դրանք ադրբեջանական կողմի համար ոչ միայն պաշտպանողական, այլ նաեւ հարձակողական բնույթ են կրում: Սա լուրջ «պատգամ» է հայկական կողմին: Այդ ուղղությամբ մենք ոչ միայն խորհելու, այլև հակադարձելու անհրաժեշտություն ունենք»,- ասել է քաղաքական գործիչը:

## Հրաժեշտի փոխարեն



Հակառակորդի կողմից ձեռնարկված գործողության հետեւանցով սեպտեմբերի 4-ին, ժամը 17:00-ի սահմաններում մարտական խնդիր կատարելու ժամանակ գոհվել են պաշտպանության բանակի պայմանագրային զինծառայողներ Մարատ Ռուդոլֆի Խաչատրյանը եւ Արման Վաչագանի Ստեփանյանը:

Արման Ստեփանյանը ՀՀ Դաշնակցության գաղափարի նվիրյալ ու ազնիվ երիտասարդ էր, բոլորիս կողմից սիրված ու հարգված: Ծնվել է 1981 թվականի նոյեմբերի 7-ին: Ամուսնացած է, երեք զավակների հայր է: Միշտ երգն ու ժպիտը շուրթերին այս երիտասարդն այդպիսին էլ կմնա բոլորիս հիշողություններում՝ որպես առաքինի ու նվիրյալ դաշնակցականի կերպար...

ՀՀ Դաշնակցության Արցախի կառույցն իր խորին վշտակցությունն է հայտնում ընկերոջ ընտանիքին ու հարազատներին...

Փառք ու պատիվ...

### Արցախում էին բելգիացի խորհրդարանականները

Սեպտեմբերի 10-12-ը Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի հրավերով Արցախում էր Բելգիայից ժամանած խորհրդարանական պատվիրակությունը՝ Բրյուսելի ֆրանկոֆոն խորհրդարանի նախագահ Ժուլի դե Գրոտի գլխավորությամբ: Պատվիրակության ուղեկցում էին ՀՀ-ի Հայ դատի Եվրոպական հանձնախմբի ղեկավար Կասպար Կարապետյանը, Հայ դատի Եվրոպական գրասենյակի անդամներ Յեղիսե Եվիկյանը, Ռոբերտ Իսվիճաճեւը, ՀՀ ԱԺ պատգամավոր Շիրակ Թորոսյանը:

Պատվիրակությունն Արցախում մի շարք հանդիպումներ է ունեցել: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպմանը նրանք ծանոթացել են Արցախի ՀՀ-ների գործունեության Արցախում եւ Արցախից դուրս:

Պատվիրակությունն այնուհետեւ այցելել է ԼՂՀ Ազգային ժողով եւ հանդիպում ունեցել ԼՂՀ ԱԺ նախագահի, ԱԺ փոխնախագահի, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահների եւ խմբակցությունների ղեկավարների հետ:

ԼՂՀ ԱԺ-ում ելույթով հանդես է եկել Բելգիայի խորհրդարանական պատվիրակության ղեկավար Ժուլի դե Գրոտը: Վերջինս կարեւորել է իրենց այցն Արցախ՝ լիարժեք տեղեկություններ ստանալու եւ գործընկերների հետ հարաբերությունների զարգացման հնարավոր տարբերակ գտնելու համատեքստում: Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին՝ Ժուլի դե Գրոտը նշել է. «Այն, ինչ սպասում է, լուրջություն է, եւ դրա համար է, որ այսօր մենք այստեղ ենք: Այստեղ ենք, որ թույլ

չտանք, որպեսզի լուրջությունն ու անտարբերությունը հաստատվի այստեղ»:

Ֆրանսիայի պատվիրակության անդամների հետ ներկաները քննարկել են արցախյան հիմնախնդրի կարգավորման շուրջ ծագած մի շարք հարցեր, կարծիքներ փոխանակել:

Հյուրերին հետաքրքրել է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ խնդրի շուրջ տարվող աշխատանքները եւ քաղաքական ուժերի կարծիքն այդ վերաբերյալ:

«Դաշնակցություն» խմբակցության ղեկավար, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանն իր ելույթում նախ շնորհակալություն է հայտնել ՀՀ-ի Հայ դատի Եվրոպական հանձնախմբի ղեկավար Կասպար Կարապետյանին՝ այցի կազմակերպման նախաձեռնության համար եւ նշել, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ՀՀ Դաշնակցության առանցքային հարցերից մեկն է, որի շուրջ աշխարհի տարբեր երկրներում գործող ՀՀ-ի կառույցները նշանակալից աշխատանքներ են իրականացնում:

Այնուհետեւ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավարը, կարեւորելով նման այցերի կազմակերպումն Արցախ, շեշտել է, որ նման այցերին պետք է, որ հաջորդեն գործնական քայլեր: «Վստահ եմ՝ Արցախի միջազգային ճանաչումն այլեւս անխուսափելի է: Սա՝ պիտի բանակցային գործընթացին նոր լիցք հաղորդի, իսկ Մինսկի խումբը եւ միջազգային հանրությունն օգտագործում են երկակի ստանդարտներ: Մենք պետք է փորձենք գերծ մակ հավասարության նշաններ դնելուց, ներկայացնել իրականությունն այնպես, ինչպես կա: Բանակցային գործընթացում Ադրբեջանը պետք է միայն գործ ունենա

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ»,- ասել է Դ.Իշխանյանը՝ կարեւորելով, որ այսօր Արցախի ժողովուրդը, անկախ տարբեր քաղաքական հայացքներից ու կողմնորոշումներից, ունի մեկ խնդիր՝ երկրի անվտանգության խնդիրը, եւ այս խնդրի շուրջ շատ կարեւոր է Արցախի բարեկամների մեծ բանակի համալրումը նոր բարեկամներով:

Պատվիրակությանն ընդունել է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանը:

Արցախի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն ընդգծել է նման այցերի կարեւորությունը՝ խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում համագործակցության հաստատման եւ խորացման առումով:

Հյուրերի խնդրանքով Կարեն Միրզոյանը մանրամասն անդրադարձ է կատարել ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի ներկա փուլին՝ կարեւորելով ԼՂՀ լիարժեք մասնակցությունը բանակցային գործընթացում՝ որպես վերջնական կարգավորման հասնելու առանցքային գրավական:

Բելգիացի խորհրդարանականներին ընդունել է նաեւ Արցախի թեմի առաջնորդ Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Պատվիրակության անդամները հետաքրքրվել են հայ եւ ադրբեջանցի հագեւորականների հարաբերություններով եւ արդյո՞ք ադրբեջանի հոգեւորականները որեւէ դերակատարություն ունեն խաղաղություն հաստատելու գործընթացում:

Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանը

պատասխանել է. «Ե՛վ մենք, ե՛ւ Ադրբեջանի հոգեւորականները կրոնական հանդիպումների ժամանակ միշտ հաստատել ենք, որ Ղարաբաղի հարցը կրոնական պատերազմ չէ: Ամբողջ ղարաբաղյան խնդիրն ունի մեկ պատճառ, այն է՝ մարդու իրավունքների ոտնահարում: Ադրբեջանի իշխանություններն ունեն մեկ նպատակ՝ դեմոգրաֆիա, ինչը նրանք արել էին պատմական Նախիջեւանում...»:

Սեպտեմբերի 10-ին Բելգիացի պատգամավորներին ընդունել է նաեւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

Հանդիպմանը քննարկվել են Արցախ-Բելգիա հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր: Առանձնակի ուշադրություն է դարձվել խորհրդարանական կապերին, մշակութային եւ մարդասիրական ոլորտներին:

Նախագահ Սահակյանը նշել է, որ Արցախը շահագրգռված է Բելգիայի եւ նրա վարչական միավորների հետ փոխգործակցության խորացման հարցում՝ նշելով, որ երկկողմ փոխշահավետ հարաբերությունների զարգացման համար առկա են նպաստավոր պայմաններ:

Բելգիացի խորհրդարանականներն իրենց այցի ընթացքում հանդիպումներ են ունեցել Արցախի պետական համալսարանի ուսանողների, Արցախի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, այցելել Արցախի գոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների թանգարաններ եւ Ստեփանակերտում գործող «Ղարաբաղ կարպետ» ընկերության արտադրամաս:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### Ֆրանսիայի Ազգային ժողովի սոցիալիստական խմբի պատվիրակությունն այցելել է Արցախ

ՀՀ-ի նախաձեռնությամբ օգոստոսի 3-6-ը Արցախ էին ժամանել Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի սոցիալիստական խմբի պատվիրակությունը՝ գլխավորությամբ խմբակցության ղեկավար պրն Բրյուսոն Լը Ռուի:

Պատվիրակությանն ուղեկցում էին ՀՀ-ի Բյուրոյի անդամներ Կիրո Մանույանը, Մուրատ Փափազյանը, Հայ Յեղափոխական Դաշնակցության Ֆրանսիայի ԿԿ անդամներ, Հայ Դատի գրասենյակի եւ ՀՀ-ի «Նոր Սերունդ» Երիտասարդական միության ներկայացուցիչներ:

Պատվիրակությունը նպատակ ուներ ծանոթանալու Արցախում տիրող իրավիճակին, երկրի ներքին կյանքին, շփվելու Հայ Յեղափոխական Դաշնակցության Արցախի կառույցի եւ ընդհանրապես հասարակության տարբեր խմբերի հետ: Ֆրանսիայի պատվիրակությունն Արցախում այցելել է առաջնագիծ, ինչի առիթով Բրյուսոն Լը Ռուին արցախյան ՀԼՄ-ների հետ մամուլ ասուլիսի ընթացքում նշել է.

«Պետք է նախաձեռնողականություն ցույց տալ եւ ընթանալ դեպի խաղաղություն: ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է այս հարցում կարգավորման ուղիներ որոնի: Ֆրանսիան եւս պիտի այդ ուղղությամբ ջանքեր չխնայի»:

«Ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան քննարկել, խոսել այն բանի մասին, ինչը չես տեսել», - ասել է սոցիալիստական խմբակցության ղեկավարը:

Այցելությունն Արցախ համընկավ սահմանային լարված իրավիճակի հետ: Առաջնագիծ



այցելած Ֆրանսիացի պատգամավորները փաստեցին, որ Դաշնակցության՝ իրենց գործընկերոջ աջակցությամբ այդ այցը հնարավորություն տվեց փաստել մեկ բան՝ Ադրբեջանի ագրեսիվ պահվածքը պետք է փոխվի:

«Չպետք է թույլ տալ, որ Ադրբեջանի ագրեսիվ

սիվ պահվածքը դառնա ընդունված, սովորական մի բան», - շեշտել է Բրյուսոն Լը Ռուին:

ՀՀ-ի Ֆրանսիայի ԿԿ անդամ Հրաչ Կարծապետյանի խոսքերով՝ Ֆրանսիայի խորհրդարանում մեծամասնություն կազմող այս խմբակցության այցն Արցախ առաջիկայում մեծ



նշանակություն կարող է ունենալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման գործում: «Այդ հարցը այս օրերին քննարկել են սոցիալիստական կուսակցության անդամների հետ», - ասել է նա:

Վարձապետյանը վստահեցրել է՝ Արցախ

կատարած այցելությունից հետո պատվիրակության անդամների մեջ էլ ավելի ամրապնդվեց այն դիրքորոշումը, որ պետք է աշխատեն Արցախի հանրապետության ճանաչման ուղղությամբ, եւ չի բացառել, որ Ֆրանսիայի խորհրդարանում առաջիկայում հնարավոր է այդ հարցի քննարկումը:

Պատվիրակության հետ Արցախ այցելած ՀՀ-ի Բյուրոյի անդամներն ու Ֆրանսիայի ԿԿ ներկայացուցիչները հանդիպում են ունեցել ՀՀ-ի Արցախի կառույցի անդամների հետ, որի ընթացքում ընկերներն անդրադարձել են Արցախ կատարած այցելության եւ նման ոչ պաշտոնական եւ պաշտոնական այցերի կազմակերպման անհրաժեշտությանը, Արցախի քաղաքական կյանքին եւ այդ ասպարեզում ՀՀ-ի Արցախի կառույցի կատարած եւ կատարելիք աշխատանքներին, ԼՂՀ արտաքին հարաբերություններում կուսակցության կողմից իրականացվող ծրագրերին, Ֆրանսիայում Արցախի ներկայացուցչության հետ համագործակցությանը, ԼՂՀ-ում կայացած եւ կայանալիք ընտրական գործընթացներին, ժողովրդավարության ամրապնդման սկզբունքների որդեգրմանը, ներկուսակցական կյանքին:

«ԱՊՐԱՍԺ»

### ՀՀ-ի կողմից սատարված 40 անձանցից 32-ը ընտրվել են ՏԻՄ ընտրություններում

Սեպտեմբերի 13-ին Արցախի Հանրապետության 207 համայնքներում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Մասնակցելու իրավունք ունեին 94 241 ընտրողներ:

Տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված տվյալների համաձայն՝ ընտրություններին մասնակցել է 52 765 ընտրող:

ԼՂՀ ԿԸՀ-ն արդեն ներկայացրել է Ստեփանակերտում, շրջակայքում եւ համայնքներում անցկացված ՏԻՄ ընտրությունների

նախնական արդյունքները:

ՀՀ-ի Արցախի ԿԿ անդամ, գրասենյակի պատասխանատու Արա Պուլուզյանի խոսքերով՝ ՀՀ-ի շրջանային կառույցները սատարել են համայնքի ղեկավարների առաջադրված պաշտոններում մտավորապես 40 անձանց, որոնցից 32 հոգի ընտրվել են:

«Դաշնակցությունը միշտ էլ կարեւորել է տեղական ինքնակառավարման մարմինների տեղն ու գործունեությունը երկրի կառավարման համակարգում: Դժբախտաբար, վերջին

տարիներին նվազել է տեղական ինքնակառավարման մարմինների կարեւորությունը, որի պատճառը երկրի կառավարման համակարգի գերկենտրոնացվածությունն է», - նշել է Արա Պուլուզյանը:

Նա նաեւ նշել է, որ Դաշնակցության մարմինները երկու ամիս առաջ են սկսել աշխատանքները: Յուրաքանչյուր շրջանի պատասխանատու մարմին ճշտել է իր շրջանում հարմար թեկնածուների ցուցակը, որն իր մեջ էր ներառում թե՛ կուսակցական, թե՛ համակիր

անհատներ:

Արա Պուլուզյանի խոսքերով, այս ամենով հանդերձ ՏԻՄ ընտրություններն ունեցել են իրենց քաղաքական նշանակությունը Ղարաբաղյան հարցում:

«Կարեւոր է, որ այս համատեքստում վերջին օրերին Արցախ ժամանած ինչպես Եվրոպացի պատգամավորները, այնպես էլ ԱՄՆ-ն, պետական մակարդակով հաստատեցին ընտրություններ անցկացնելու լեգիտիմությունը»:

«ԱՊՐԱՍԺ»

# ԻԼԻՊ-ից ձերբազատվելու համար թուրքերը նախ պետք է ազատվեն Երդողանից. Ջարուֆ Սասունյան

Թուրքիան ոչ միայն հրաժարվել է միանալ ԱՍՏՕ-ի իր դաշնակիցներին ԻԼԻՊ-ի դեմ պայքարում, այլև վերապատրաստել, զինել և աջակցել է հազարավոր ահաբեկիչների ներթափանցմանը Սիրիա և Իրաք:

Բրիտանական «Գարդիան» պարբերականը հայտնել է, որ մայիսին, երբ Միացյալ Նահանգների հատուկ ուժերը Արևելյան Սիրիայում շրջապատեցին և սպանեցին ԻԼԻՊ-ի ղեկավար Աբու Սայաֆին, հարձակման ժամանակ առգրավված փաստաթղթերը բացահայտեցին Անկարայի սերտ համագործակցությունն ԻԼԻՊ-ի հետ: Չարյուրավոր հողվածներ հրապարակվեցին ամբողջ աշխարհում՝ նկարագրելով ԻԼԻՊ-ին ցուցաբերած թուրքական աջակցության մանրամասները: Դանիել Փայֆսը «Վաշինգտոն թայմս»-ում հրապարակած «Թուրքիայի աջակցությունը ԻԼԻՊ-ին» հոդվածում տեղեկացնում է, որ «Թուրքերն ավելի շատ բաներ են տրամադրել, քան պարզապես սահմանի հատումը. նրանք ապահովել են ԻԼԻՊ-ի եկամուտի, մատակարարումների, վերապատրաստման և զենքի առանցքի բաժինը»: Փայֆսը նաև բացահայտել է, որ ԻԼԻՊ-ի վիրավոր զինյալները բուժում են ստացել թուրքական հիվանդանոցներում, և Թուրքիան ԻԼԻՊ-ին վճարել է 800 միլիոն դոլար նավթի ապօրինի առաքման համար:

Փոխնախագահ Ջո Բայդենը անցյալ տարվա հոկտեմբերին Չարվարդի համալսարանում ունեցած իր ելույթում հաստատեց Թուրքիայի կործանարար դերը իսլամիստ ահաբեկիչների աջակցման գործում. «Թուրքիան, Սաուդյան Արաբիան և Էմիրաթները հարյուր միլիոնավոր դոլարներ են հազարավոր տոննա զենք են նվիրաբերել յուրաքանչյուրին, ով կպայքարի Ասադի դեմ, սակայն այդ մարդիկ, որոնք ստանում էին՝ բոլորը Նուսրա, Ալ-Քաիդա խմբավորումներից էին և աշխարհի տարբեր մասերից եկած շիհադական ծայրահեղական տարրեր էին»: Փոխնախագահը նաև բացահայտեց, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Երդողանը մասնավոր գրույցում իրեն ասել է. «Դուք ճիշտ էիք: Մենք շատ շատերին թույլ տվեցինք անցնել»: Բայդենը հետագայում

ներողություն խնդրեց իր հրապարակային ելույթի համար, որպեսզի մեղմի Երդողանի զայրույթը:

Միտլեյ Պրոտերոն՝ McClatchyDC.com կայքից, օգոստոսի 24-ին ապշեցուցիչ բացահայտումով տեղեկացրեց, որ թուրքական հետախուզությունը ահազանգել էր իսլամիստ ահաբեկիչներին, որ ամերիկյան վերապատրաստում ստացած մի խումբ զինյալներ պատրաստվում են Թուրքիայից անցնել Սիրիա: ԱՄՆ վերապատրաստման 500 միլիոն դոլար արժողությամբ ծրագրի 54 շրջանավարտներից շատերին՝ ժամանելուն պես Ալ-Քաիդայի Նուսրա ճակատը անմիջա-

դիստան ստեղծելու քրդերի վաղեմի երազանքը, քրդերի դեմ Իրաքում, Սիրիայում և Թուրքիայում լայնածավալ արյունալի հարձակումներ սանձազերծելով՝ Երդողանը հույս ունի, որ նոյեմբերի 1-ին թուրք ընտրողները կօգնեն նրան վերականգնել իր կուսակցության՝ այս տարվա հունիսի ընտրություններում կորցրած խորհրդարանական մեծամասնությունը: Ի դժբախտություն Երդողանի՝ քրդերի դեմ հարձակումները բացասական արձագանք գտան շատ թուրք քաղաքացիների շրջանում, որոնք կորցրել էին բանակում ծառայող իրենց սիրելիներին՝ պարզապես Նախագահի քաղաքական



պես կանգնեցրեց և առեւանգեց...

Անցյալ ամիս, երբ Թուրքիան վերջապես համաձայնեց միանալ ահաբեկչության դեմ պատերազմին և «թույլ տվեց» Միացյալ Նահանգներին Ինչիրլիքի ռազմակայանից հրթիռակոծել ԻԼԻՊ-ի թիրախները, ԱՄՆ պաշտոնյաների նախնական ցնծությունը վերածվեց սոսկումի, երբ նրանք հասկացան, որ թուրքական ռազմական առաջադեմությունը Իրաքում և Սիրիայում քրդերին, այլ ոչ թե ԻԼԻՊ-ին հարվածել էր: Թուրքիան, հարվածելով քուրդ գրոհայիններին, ըստ էության, օգնում էր ԻԼԻՊ-ին, քանի որ քրդերը ԱՄՆ-ի միակ վստահելի ռազմական գործընկերներն էին այդ տարածքում:

Ցանկանալով խոչընդոտել անկախ Զուր-

վարկանիշը բարձրացնելու համար...

Չուսահատության մեջ հայտնված Երդողանն առաջիկա շաբաթների ընթացքում կարող է դիմել ևս մեկ հնարքի: Տեսնելով, որ քրդերի ռմբակոծումը չի ստեղծում ակնկալվող հանրային աջակցություն առաջիկա ընտրություններում, նա կարող է հրամայել զանգվածային հարձակումներ ձեռնարկել քրդերի դեմ ամբողջ Արևելյան Թուրքիայում: Իսկ հետո, որպես պատրվակ օգտագործելով քաղաքացիական պատերազմը, արտակարգ դրություն հաստատել, կասեցնել խորհրդարանը և կառավարել կղերապետական օսմանյան սուլթանի երկաթե բռունցքով...

Միացյալ Նահանգները և ԱՍՏՕ-ի իր

դաշնակիցները պարտավոր են հնարավոր ամեն ինչ անել՝ կանգնեցնելու իրենց իսկ ստեղծած հրեշի, մինչև նա կոչնչացնի ամեն ինչ իր ճանապարհին: Երդողանը լուրջ սպառնալիք է իր սեփական քաղաքացիների՝ թուրքերի, քրդերի և այլոց համար, ինչպես նաև ապակայունացնող ուժ է ամբողջ տարածաշրջանի համար: Արևելյան Թուրքիայում քուրդ բնակչության վրա վայրագ հարձակումները լավագույն փաստն են, թե ինչու քրդերն արժանի են անկախ պետականության և չեն կարող այլևս հանդուրժել թուրքական դաժան վարչակարգը...

Օբամայի վարչակազմը պետք է հետևի Թուրքիայում ԱՄՆ նախկին դեսպան և 2005-2009 թվականներին պաշտպանության փոխնախարար Երիկ Էդելմանի իմաստուն խորհրդին: «Նյու Յորք թայմս» թերթում օգոստոսի 27-ին հրապարակված իր հոդվածում Էդելմանը առաջարկում է, որ Միացյալ Նահանգները «սահմանափակի Թուրքիայի մասնակցությունը բարձր մակարդակի հանդիպումներում, կրճատի հետախուզական համագործակցությունը և մերժի ամերիկյան աջակցությունը Թուրքիային միջազգային ֆինանսական հաստատություններում»: Այս և շատ այլ քայլեր պետք է ձեռնարկվեն առաջիկա մի քանի շաբաթների ընթացքում, մինչև նոյեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրությունները:

«Նյու Յորք թայմս»-ի խմբագրական խորհուրդը օգոստոսի 31-ի խմբագրականում Երդողանի քաղաքական հնարքները բնութագրեց որպես փորձ՝ «փրկելու իր հավակնությունները ավտորիտար կառավարումը և մեծապես ընդլայնված լիազորությունները շարունակելու համար»:

Սիրիայում և Իրաքում ահաբեկչության հիմնախնդիրը սահմանափակելու, այդ երկրներում կայունությունը վերականգնելու և Թուրքիայի ներսում աճող արյունահեղությունը դադարեցնելու համար թուրք ժողովուրդը չպետք է թույլատրի, որ Երդողանի կուսակցությունը վերականգնի իր կորցրած խորհրդարանական մեծամասնությունը...

**Թարգմանությունը՝  
Ռուզաննա ԱՎԱԳՅԱՆԻ**

## Իսլամական պետության ստույգ սպառնալիքը Չայաստանի և հայության համար



«Իսլամական Պետություն» անվան տակ գործող ահաբեկչական մեքենան, որն իր խուժուրդ գործողություններով խախտեց աշխարհակարգի հավասարակշռությունները Միջին Արևելյան տարածաշրջանում, և՛ որ հայտնի է բազմապիսի հորջորջումներով (IS, ISIS, ISIL), այժմ արդեն մաս է կազմում Չայաստանի և հայության ազգային անվտանգության անմիջական մարտահրավերներին մեկից ավելի չափորոշիչներով:

Չայ պետականությունը կղզիացած երեւոյթ է: Այն պատկանում է մի տարածաշրջանի, որն այսօր դիմագրավում է այս մեծ սպառնալիքին՝ ուղղված շրջանի կայունության, բազմադարձության, խաղաղության, մշակութային ժառանգության, մանավանդ՝ շրջանի երկրների վաղուց հաստատված սահմանագծերին:

Առաջին հերթին՝ ISIS-ը անմիջական վտանգ է ներկայացնում մեր Միջին Արևելյան Սփուրքին, հատկապես՝ Սիրիայի և, մանավանդ, Լիբանանի մեր ռազմավարական խարխիսին: Իսկ Սփուրքը օրգանականորեն ամնչված է Չայաստանի լինելիության մեծ խնդրին:

Երկրորդը՝ ISIS-ը վտանգում է ապակայունացնում է իսլամական աշխարհը, որտեղ տեղավորված է մերօրյա հայ պետականությունը:

Երրորդը՝ Չայաստանը մաս է կազմում Ռուսաստանի աշխարհաքաղաքական գոտուն, որ մեծ զգայնություններով կապված է իսլամական աշխարհի վայրիվերումներին և տրամադրություններին, և որոնք անմիջականորեն անդրադառնում են Եվրասիական միության ներքին խմորումների վրա:

Չորրորդը՝ մեր անմիջական հարեւանության երկրները՝ Թուրքիան և Ադրբեջանը, գործոն դերակատարներ են ISIS-ի համար: Թուրքիան շատ բարդ խաղ է խաղում՝ ISIS-ի միջոցով իր թաթի տակ առնելու Յուսուֆային Սիրիայի և Յուսուֆային Իրաքի ռազմավարական գոտին՝ իր բնական հարստություններով: Միաժամանակ, Թուրքիան իրականացնում է ISIS-ը իր թաթի տակ պահելու ռազմավարություն և տարածաշրջանի քրդական ուժը (լայն չափերով ՓԶԶ-ի խարխիս) ISIS-ի միջոցով կոտորակելու քաղաքականություն:

Այս առումով, անխուսափելիորեն վտանգների են ենթակա մեր դիրքերը հայ-թուրքական և հայ-ադրբեջանական ճակատներում: Վտանգված են հատկապես Միսսիլի խմբի բանակցային գործընթացում հայկական կողմի դիրքերը:

Վերջապես, հինգերորդը՝ Իրանի սահմանը իր հատուկ մարտահրավերներն ունի Չայաստանի համար: Թեև Իրանը ISIS-ի դիտրիմ թշնամին է, սակայն այն շատ հեռու է լիովին պաշտպանված լինելուց և հայ-իրանական սահմանը, այս առումով, գրավիչ կարելիություն է ներկայացնում ISIS-ի և

իրեն սատարող ուժերի համար...

Կուզեմ ավելացնել, որ ISIS-ի վտանգն իր ահաբեկչական արարքները չեն միայն: ISIS-ը մեծ հեղաշրջում է բերում՝ իսլամական աշխարհի կյանքի վրա և մտայնության մեջ: Այն իր ֆաշիզմով վարակում է մեր կենսական տարածությունը հանդիսացող տարածաշրջանը՝ Ռուսաստանից մինչև Միջերկրական և Յուրկական օվկիանոս: Դրանով ստեղծված սպառնալիքը կարող է տարածվել և իր խելագար ալիքի մեջ առնել մեր ժամանակաշրջանը՝ բազմապիսի դրսևորումներով:

Պետք է վերջապես ավելացնել, որ ISIS-ի «լուծարում»-ը (եթե հնարավոր լինի) Յուսուֆային Սիրիայի և Իրաքի տարածքներում դեռ չի նշանակում նրա փաստացի անհետացումը տարածաշրջանի կյանքից: ISIS-ը բանալի-գործիք է Թուրքիայի ձեռքին: Այն ստեղծված է Թուրքիայի կողմից իր ծավալապաշտ քաղաքականության զինարանի համար: Իսկ Չայաստանն ու Չայ դատը (ինչպես Զրդստանն ու քրդական դատը) գտնվում են այդ աշխարհաքաղաքական ճանապարհի զգայուն կետերի վրա:

**Կարո ԱՐՄԵՆՅԱՆ**

### Արցախը նրան վերադարձնում է իր արմատներին



Կան հայեր, ովքեր ապրելով օտար երկրներում, կարելի էր ներդրում են ունենում Հայաստանի վարկանիշի եւ առհասարակ Հայաստանի զարգացման եւ բարգավաճման գործում: Հաճախ նրանց անուններն այդպես էլ անհայտ են մնում: Ոմանց մասին էլ բարեբախտաբար իմանում եմ: Նրանցից մեկն էլ Վալենտինա Կարախանյանն է՝ Վատիկանի արխիվի հետազոտողներից մեկը, ով ամուսնու՝ Լորենցո Նատալիի հետ ՀՀ-ի Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանի հրավերով օրերս այցելել էր Արցախ:

«Ապառաժ»-ը հնարավորություն ունեցավ ծանոթանալու նրա գործունեությանն ու ապագա ծրագրերին:

Վալենտինա Կարախանյանը ծնվել է Ջավախքի Ախալցխայի շրջանի Միսիկիսի գյուղում, ինչպես ինքն է ասում՝ հայկական արմատներին ամուր կառչած գյուղացու ընտանիքում: Ընտանիքը հաճախում էր տեղի կաթոլիկ եկեղեցի, որտեղ էլ փոքր տարիքից Վալենտինան երգեհոն էր նվագում:

«Մի օր եկեղեցու մենակատարը չկար, եւ ինձ խնդրեցին երգել նրա փոխարեն. պարզվեց՝ ինձ մոտ ավելի լավ է ստացվում երգելը, քան նվագելը», - նշում է Վալենտինան ծափոտով:

Այդ դեպքից հետո երգը պետք է իր ավելի լուրջ մասնագիտությունների հետ համատեղ ուղեկցեր նրան:

Մինչեւ 8-րդ դասարանը սովորել է ռուսական դպրոցում, սակայն միշտ երագել է հայկական կրթություն ստանալու մասին, եւ 8-րդ դասարանն ավարտելուց հետո ծնողները նրան փոխադրել են հայկական դպրոց:

16 տարեկանում, կրթությունը շարունակելու համար, Հայաստանում առաջին հայ կաթոլիկ առաջնորդ արքեպիսկոպոս հայր Ներսես Տեր-Ներսեսյանի միջոցով փոխադրվել է Հռոմ:

Հռոմի Ուրբանյան համալսարանի աստվածաբանության եւ փիլիսոփայության բաժնի բակալավորի աստիճան ստանալուց հետո ընտրել է համալսարանի հոգեբանության բաժինը: Նա ջանք էր խնայում ուսման մեջ հաջողությունների հասնելու համար:

«Պետք էր բավական բարձր գնահատականներ ունենայի, որպեսզի կարողանայի ընդունվել, հետո էլ՝ շարունակել

ուսումնա: Բարեբախտաբար, ինձ հաջողվեց դա անել», - նշում է նա:

Ուսման տարիներին նաեւ աշխատում էր, որովհետեւ ընտանիքը հնարավորություն չուներ նրան Եվրոպայում պահելու:

Վենետիկի Ca Foscari համալսարանի հոգեբանության ֆակուլտետի վերջին կուրսի ընթացքում հաճախում էր Պոպրաքս մշակութային ընկերակցության կողմից կազմակերպած հայերենի դասընթացները:

«Կարող եմ ասել, որ մեծամասամբ հայերենի գիտելիքներս հարստացրել եմ Իտալիայում»:

Ուսումնա ավարտելուց հետո նրան առաջարկել են աշխատել ՀՀ դեսպանատանը, որտեղ աշխատել է մինչեւ վերջերս՝ միաժամանակ շարունակելով իր հետազոտական աշխատանքները:

Սակայն այսքանով չավարտվեց նրա ուսումնառությունը: Նա ընդունվեց արխիվիստիկայի՝ պալեոգրաֆիայի եւ դիվանագիտության վատիկանյան դպրոցը, որը երկու տարին մեկ աշխարհի տարբեր երկրների դիմորդների համար 30 տեղ է տրամադրում: Դպրոցն ավարտելուց հետո Վալենտինան Վատիկանի գաղտնի արխիվներում հետազոտությանը էր զբաղվում:

«Ինձ համար դա նախախնամություն էր, որովհետու իմ երագանքն է եղել՝ ուսումնասիրել եւ կապ ունենալ այն ամենի հետ, ինչն ինձ հարագատ էր: Ես մեծացել եմ փոքր, սակայն մտերմիկ կաթոլիկ միջավայրում: Պատանեկությունս ու երիտասարդությունս անցկացրել եմ մի քաղաքում, որն ամբողջությամբ կաթոլիկ էր: Սկզբում ինձ թվում էր՝ մի մեծ տաճարում եմ գտնվում», - ասում է:

«Շատ է խուճում Հայոց Ցեղասպանության գաղտնի փաստաթղթերի մասին, այն մասին, թե ինչ է պարունակում Վատիկանը, ինչն է լույս տեսել, ինչն է, որ չեն թողնում, ինչն է գաղտնի: «Գաղտնի» բառը բոլորիս գրավում է՝ ձգողական մի բան ունի իր մեջ: Ես ինքս ցանկություն ունեի հասնել այնտեղ»:

Այժմ իտալացի գործընկերոջ՝ Օմար Վիգանոյի հետ Վատիկանի արխիվներում ուսումնասիրում են Հայոց ցեղասպանության մասին փաստաթղթերը, եւ այս տարվա նոյեմբերին պատրաստվում են գիրք հրատարակել, որտեղ ամփոփված կլինեն այդ բոլոր փաստաթղթերն ու նամակները:

Վալենտինան հուսով է, որ գիրքը կթարգմանվի նաեւ հայերեն եւ անգլերեն:

Գրքի ֆինանսավորման մասին խոսելիս Վալենտինան նշում է, որ դա մի աշխատանք է, որի դիմաց պատասխան չի կարող ակնկալել, պահանջել կամ սպասել: Նրա խոսքերով՝ դրա հատուցումն այլ ձեւ է լինելու՝ հոգեկան բավարարության ձեւով:

«Առկա են Վատիկանի արխիվների տպագրություններ Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որոնք ժամանակագրական հերթականությամբ տեղադրված նամակներ են: Դա երեւի դժվարությամբ կհասկանան այն մարդիկ, ովքեր Ցեղաս-

պանության մասին քիչ տեղեկություն ունեն: Օմար Վիգանոյի հետ որոշեցինք ամեն ինչ հավաքել եւ մատուցել ընթերցողին ավելի մատչելի եւ հասկանալի լեզվով, նամակները հրատարակել՝ հյուսելով պատմության հետ այնպես, որ նամակներն ու փաստաթղթերը պատմեն պատմության մասին: Մենք ոչինչ չենք ավելացրել՝ բացի ստույգ պատմական փաստերից»:

Ուսումնասիրությունների ընթացքում նրանք հայտնաբերեցին մի շատ հետաքրքիր գիրք, որը «սպիտակ գիրք» է կոչվում եւ որն առաջվել էր Վատիկանի տարբեր ներկայացուցչություններին դեռեւս 1916 թվականին: Այդ գրքում ամփոփված են առաջին աշխարհամարտի վերաբերյալ Վատիկանի դիրքորոշումները: Իսկ գրքի մի մեծ հատված հատկացված է Հայոց ցեղասպանությանը:

Դա մի փաստաթուղթ է, որը մինչեւ հիմա լույս չի տեսել: Հրատարակված տարիներին, լինելով ներքին շրջաբերական, վերապահված էր միայն դիվանագետների օգտագործմանը:

Վալենտինան նշում է, որ մինչեւ հիմա իրենց ուսումնասիրածն ու հայտնաբերածը ըստ էության, չի տարբերվում Ֆրանչեսկոս պապի հայտարարություններից:

«Պապի հայտարարությունը շատ դիպուկ էր, սակայն դա ի սկզբանե եղել է Վատիկանի դիրքորոշումը»:

Առաջիկա աշխատանքների եւ պլանների մասին խոսելիս՝ Վալենտինան նշում է, որ մեծ ցանկություն ունի նաեւ գիրք հրատարակել Վատիկանի արխիվներում առկա Հայաստանի Առաջին Հանրապետության վերաբերյալ փաստաթղթերի մասին:

«Ես մեծ ցանկություն ունեմ Վատիկանից ձեռք բերել այդ փաստաթղթերը, ինչը մեծ աշխատանք է պահանջում եւ մեծ գումարների հետ է կապված: Իմ միակ մտավախությունս այն է, որ Հայոց ցեղասպանությանը եւ ՀՀ Առաջին Հանրապետությանն առնչվող փաստաթղթերի մեջ կան փաստաթղթեր, որոնք գրված են գրամեքենայով. թանաքի որակը լավ չի եղել եւ այդ գրերը կամաց-կամաց կորցնում են իրենց գույները: Պետք է ռեսուրսներ գտնել եւ այդ փաստաթղթերը թվայնացնել»:

Վալենտինան վստահ է, որ վերջին տարիներին իտալացիները շատ են հետաքրքրվում հայերի եւ առհասարակ քրիստոնյաների ջարդերով:

«Եվրոպան հիմա կարծես թե բացում է աչքերը՝ տեսնելով 100 տարի առաջ իրագործված ոչ միայն հայերի, այլև քրիստոնյաների ջարդերն ու տառապանքները: Իտալիայում շատ մեծ ճանաչում ստացավ Հայոց ցեղասպանությունը Անտոնիա Արսլանի «Արտույտների ագրակը» գրքից, այնուհետեւ ֆիլմից հետո»:

Վալենտինան անմասն չէ Հայոց ցեղասպանության մասին պատմող այդ հանրահայտ ֆիլմից: Ֆիլմում հնչող «Ով սիրուն, սիրուն» երգը հենց նա է կատարում: Ֆիլմի որոշ մասերի կոմպոզիցիան նաեւ նա է կատարել:

Ինչպես նշել էինք, երգը միշտ ուղեկ-

ցել է նրան: Հռոմ տեղափոխվելուց անմիջապես հետո երգում էր Հռոմի Լեոնյան վարժարանի երգչախումբում: Այսօր այնտեղ գործում է քառաձայն երգչախումբ, որը նա է վարում: Հայկական պատարագներին այսօր նաեւ իր իտալացի ամուսին Լորենցո Նատալեն է մասնակցում:

Խոստովանում է, որ միշտ ցանկություն է ունեցել վերադառնալ Հայաստան կամ Ջավախք, սակայն հասկացել է, որ դրսից գուցե ավելի մեծ օգուտ բերի հայությանը:

Վալենտինան Աշոցի «Տիրամայր Նարեկ»-ի իտալական հիվանդանոցի ներկայացուցիչն է Իտալիայում: Հիվանդանոցը երկրաշարժից հետո Հռոմի պապ սուրբ Հովհաննես Պողոս երկրորդը նվիրել է Հայաստանին, եւ ինչպես նա է ասում՝ կարծում էր, որ ամենատրամաբանականը հայրենիք վերադառնալը եւ այնտեղ աշխատելն էր:

«Իմ գործը հիվանդանոցի համար միջոցներ հայթայթելն է, որովհետեւ այդ շրջանում կենսական նշանակություն ունի հիվանդանոցը», - ասում է նա:

«Առաջ քայլելով՝ նոր դռներ ու ճանապարհներ են բացվում, երբ ինձ թվում էր,



թե տվյալ բանը մաքսիմումն է, որ կարող եմ անել: Այսօր 36 տարեկան եմ, եւ հասկանում եմ, որ դա ընդամենը սկիզբն էր»:

Վալենտինան խոստովանում է, որ Արցախ այցը նրան, նախ եւ առաջ վերադարձնում է իր արմատներին, նոր լիցքեր հաղորդում եւ նաեւ պարտավորեցնում՝ ավելի մեծ եռանդով աշխատել:

«Հայրս, 10 տարի է, ինչ մահացել է, սակայն նա միշտ մեզ ասում էր, որ մեր երկիրը Հայաստանն է: Այդ ներքին զգացումը միշտ ուղեկցել է ինձ, սակայն այն լավագույնս այստեղ եմ գգում, Հայաստանի այս հրաշալի մասնիկում՝ Արցախում: Այստեղ ակնատեսը եղա այն բանի, որ ամուր ընտանիքներն են ամեն ինչի հիմքն ու հումուսը: Արժանապատվությունն ու սեփական հողի նկատմամբ հարգանքն ամեն քայլափոխի ուղեկցում են քեզ Արցախում: Ես եւ ամուսինս դեռ կվերադառնանք եւ մեր ջանքերը չենք խնայի Հայաստանի համար, որն իր մեջ ներառում է նաեւ Արցախը»:



Նա չգիտեր, որ հայ է...



կանում եմ գրուցել հետը, հատկապես, երբ ասացի, որ Արցախից եմ: Իբրահիմն ապրում է Մուշում, ամուսնացած է, ունի 3 զավակ: Ինչպես նա է պատմում՝ մի քանի տարի առաջ է իմացել, որ հայ է: «Մենք միշտ որպես քուրդ ենք ապրել: Ծնողներս երբեք չեն ասել, որ մենք հայ ենք. երեւի վախից կամ մեկ այլ պատճառով լռել են:»

Սակայն Մուշում ապրող տարիքով քրդերը շատ լավ գիտեն, թե Մուշում ով ինչ պատմություն, ինչ ծագում ունի: Նրանցից էլ շատ պատահական իմացա, որ ծնողներս հայ են: Հարցրեցի՝ ծնողներս չժխտեցին», - պատմում է Իբրահիմը և ավելացնում, թե պարզել է, որ իր նախնիները Սասունից են գաղթել Մուշ: Ցեղասպանությունից փրկվելու համար իսլամացել են, ապրել քրդերի հետ՝ որպես քուրդ:

Իբրահիմը խոսում է քրդերեն: Մի քանի հայերեն բառեր գիտի միայն, որ ինքնուրույն է սովորել: Նրան թարգմանում էր ընկերը, ով Ստամբուլից էր եկել հայերեն ավելի լավ գիտի:

«Մեծ պապիս անունը եղել է Սաքո Սարգսյան, - ասում է Իբրահիմը, - ինձ համար ցնցող էր, երբ իմացա ծագմանս մասին: Հավատալ չէր լինում: Որոշեցի՝ հայերի փնտրել, հայերեն սովորել:»

Իբրահիմն իմացավ, որ Մուշում գործում է «Տարոն-Մուշ» հայկական միությունը և միացավ միությանը: Միությունը կոչված է համախմբելու տեղի հայերին, պահպանելու նրանց հայեցողությունը, չիմացողներին հայերեն ու հայոց պատմություն ուսուցանելու: Իբրահիմն այնտեղ առաջին անգամ հայերենին ծանոթացավ, եւ հիմա մի քանի բառեր, մի քանի պարզ նախադասություններ գիտի:

«Տարոն-Մուշ» միությունը Համահայկական խաղերի մասնակցել է ֆուտբոլային թիմով: Իբրահիմն էլ թիմի կազմում է հանդես եկել: «Ծիշտ է՝ թիմը հաջողություն չունեցավ, բայց ես ուրախ եմ, որ առաջին անգամ Հայաստան եկա: Ես եղա Գառնիում ու Գեղարդում: Գեղարդն ինձ վրա մեծ տպավորություն գործեց. հուզմունքս անհնար էր թաքցնել: Դա մեր պատմությունն է, դա իմ ու իմ նմանների պատմությունն է, որի մասին չգիտեի, որը կոր գտա...»:

Իբրահիմը պատմում է, որ Մուշում շատ կան իսլամացած, ծպտյալ հայեր, ու նրանցից շատերին ճանաչում է անձամբ: Նրանցից ոմանք կոր են իմացել իրենց հայկական ծագման մասին, որովհետեւ նախնիները թաքցրել են դա: «Քրդերի շրջապատում շատ դժվար է որպես հայ մնալ», - ասում է:

Իբրահիմը երկու հորեղբայր ունի: Մեծ հորեղբայրը 125 տարեկան է: «Երբ իմացա, որ հայ եմ, հարցրեցի հորեղբորս, եւ նա պատմեց, որ ինքը տեսել է Ցեղասպանությունը, հիշում է՝ ինչպես էին ավերում, սպանում, թալանում, խարազանում. ոչինչ չէին խնայում», - պատմում է իմ գրուցակիցը և ավելացնում. «Երեւի նման հայերը իրաջքով են փրկվել: Բայց նրանց պետք չէ մեղադրել. նրանք ստիպված էին ծպտյալ ապրելու»:

Իբրահիմը երկար չխոսեց. երեւում էր, որ հուզվում է հայերեն չիմանալու պատճառով: Նա ասաց, որ այլեւս իրեն ոչինչ չի բաժանի Հայաստանից: Հաջորդ անգամ կնոջն ու երեխաներին էլ կբերի...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Ինքնության ճգնաժամը Թուրքիայում ու դրա հետեւանքները քրդական գործնի համատեքստում

«Եթե մի օր Թուրքիան քակվի, ապա դա կլինի ոչ թե գեղքի միջոցով, այլ՝ ինքնության խնդիր»: Հրանտ Դինք

Օսմանյան կայսրության ձեւավորումն իրականացվել է նվաճողական արշավանքների միջոցով: Այդ արշավանքներին զուգահեռ կիրառվել է նաեւ բռնի իսլամացման, թուրքացման քաղաքականություն, որի արդյունքում էլ կազմավորվել է խառնածին բնակչություն: 1923թ. կազմավորված Թուրքիայի Հանրապետության կառավարությունը շարունակեց Օսմանյան կայսրության ծուղակային քաղաքականությունը: Այդ քաղաքականության նպատակն էր՝ միատարր թուրքական պետության ստեղծումը: Թուրքական պետական վարչամեքենան Թուրքիայում բնակվող շուրջ 40 ժողովուրդների ու էթնիկ խմբերի ներկայացնում էր որպես թուրքեր՝ անտեսելով նրանց բոլոր (կրոնական, լեզվական, մշակութային ու մի շարք այլ) իրավունքները: Թուրքական իշխանությունները՝ թեւեւ արտաքուստ ցույց են տալիս, որ Թուրքիայում բոլորը թուրք են, իրականում ներքուստ անհանգիստ են, եւ իրենք էլ են փորձում պարզել երկրում բնակվող ազգերի իրական խճանկարը: Թուրքիայի Կայսերի (Կեսարիա), Մալաթիա եւ Էլազըզ (հարբերդ) քաղաքների համալսարանների գիտնականները, Ազգային անվտանգության խորհրդի հանձնարարությամբ, ուսումնասիրելով Թուրքիայի ազգային փոքրամասնությունները (Վարդանյան Ս., Թուրքիայի կրոնափոխ հայության թվաքանակի վերաբերյալ. հայախոս համաձայնագրեր, Հանրապետական, թիվ 10, 2009, էջ 7)՝ 2000թ. կազմեցին եւ հրատարակեցին ազգային փոքրամասնությունների պատկերը ուրվագծող գեկուցագիրը: Սակայն գեկուցագրում տեղ գտած ազգային փոքրամասնությունների հրատարակած թվաքանակը չի համապատասխանում իրականությանը. այն նվազեցված է մի

քանի անգամ: Թուրքական կառավարությունը, իրականացնելով մարդահամար կամ այլ ուսումնասիրություն, ազգային փոքրամասնությունների իրական թվաքանակը խիստ գաղտնի է պահում, ու հրապարակում է այն տվյալները, որոնք բխում են պետական շահերից: Վերջին տարիներին սկսվել է մի գործընթաց, որը փաստում է ծուլման պետական քաղաքականության՝ ըստ էության ձախողման մասին: Ըստ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի՝ Թուրքիայում էթնիկ ինքնության շուրջ տեղի ունեցող գործընթացները կարելի է բաժանել պայմանական երկու խմբի. «Առաջին՝ տարբեր ժողովուրդներ, ինչպիսիք են քրդերը, չերքեզները, (վերջին ժամանակներըս նաեւ իսլամացված հայեր) առավելապես բացահայտ պայքարում են իրենց իրավունքների համար, վերաբերվելով իրենց ազգային մշակույթը, լեզուն, սովորույթները եւ դրանով փորձում թոթափել պարտադրված «թուրքի» ինքնությունը: Տարբեր ազգերի էթնիկ ինքնությունն անտեսելուն է միտված Թուրքիայի դպրոցներում պարտադրվող, այսպես կոչված, «աշակերտի երդումը»: Այդ երդմամբ են ամեն օր Թուրքիայի դպրոցներում միլիոնավոր աշակերտներ սկսում իրենց ուսումնական գործընթացը. երդման առաջին բառերն են՝ «Թուրք եմ, ճիշտ եմ, աշխատասեր եմ»: Ահա հենց սա է պատճառ դարձել, որ տարբեր ազգությունների ներկայացուցիչներ դիմեն դատարաններ, այդ թվում՝ եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պահանջելով վերացնել այդ երդումը եւ չստիպել, որ քուրդ, չերքեզ, հայ, հույն եւ այլ ազգերի երեխաներ ամեն օր երդվեն, որ իրենք թուրք են:

Երկրորդ՝ տարբեր ժամանակաշրջաններում բռնի ծուլման ենթարկված մարդկանց շրջանում սկսվում է էթնիկ ինքնագիտակցության վերաբերյալ լուռ գործընթաց, որը հետագայում նույնպես ստանում է բացահայտ բնույթ: Բռնի ծուլման ենթարկված մարդկանց մի մասը նախ սկսում է կասկածի ենթարկել իր

«թուրքական» ինքնությունը, ինչին հաջորդում է իրական ինքնության փնտրությունը: Ահա հենց այս երեւույթի արդյունքում՝ Թուրքիայի բնակչության որոշակի հատվածում սկսվել է, այսպես կոչված, էթնիկ ինքնության ճգնաժամ:

Այսօր Թուրքիայում գիտական, հասարակական եւ քաղաքական մակարդակներում ամենատարածված հարցերից է՝ ո՞վ ենք մենք: Թուրք որոշ սոցիոլոգներ, անդրադառնալով այս խնդրին, իրավացիորեն երեւույթը դասում են թուրքական հասարակության շրջանում տարածված հիվանդությունների շարքին: Այս առումով բավական հետաքրքիր են անվիսցի եւ գերմանացի մասնագետների հետազոտությունների արդյունքները, համաձայն որոնց՝ Թուրքիայի բնակչության 38-40 տոկոսը իրեն թուրք չի համարում: Թուրքիայում էթնիկ ինքնության ճգնաժամի խորացմանը նպաստում են նաեւ ներկայիս տարաբնույթ գործընթացները. օրինակ՝ տասնամյակներով արգելված թեմաների քննարկումները, մի շարք տաքսիների ճեղքումը, որոնք իրենց հերթին բազմաթիվ հարցականներ են առաջացնում հասարակության համար»:

Թուրքիան գտնվում է քրդական օղակի մեջ. մի կողմից՝ Սիրիայի տարածքի քրդական բնակավայրերը, որոնք գտնվում են թուրք-սիրիական սահմանամերձ գոտում, մյուս կողմից՝ Հյուսիսային Իրաքի տարածքում գտնվող Զրդստանի ամկայությունը, որն, ի դեպ, ունի նաեւ նավթային բավականաչափ պաշարներ, մեկ այլ կողմից էլ՝ Թուրքիայի ներսում բնակվող՝ պաշտոնական տվյալներով 20 միլիոն, որոնք հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում առաջին անգամ իրենց սեփական կուսակցությամբ են կարողացել պատգամավորական մանդատներ ստանալ խորհրդարանում, ինչի պատճառով էլ թուրքական կառավարությունը գնաց մի շարք զինուժների՝ քրդերին տալով որոշ լիազորություններ: «Իսլամական պետություն» ահաբեկչական կառույցի երեւան գալուն պես

թուրքերը սկսեցին ոչ բացահայտ աջակցել այդ կառույցին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված ահաբեկչական խմբավորումը հարձակումներ էր իրականացնում քրդական բնակավայրերի վրա: Այդ պատճառով էլ թուրքական կառավարությունը երկար ժամանակ չմասնակցեց միջազգային կոալիցիային, որոնք միայն օդային հարվածներ են իրականացնում ահաբեկչական վերոնշյալ կառույցի դիրքերին: Թուրքիան միայն վերջերս միացավ միջազգային կոալիցիային, սակայն, թուրքական կործանիչների թիրախը հանդիսացան քրդական դիրքերը: Հարկ ենք համարում նշել, որ այդ պայքարում առավել արդյունավետ մարտեր են մղում քրդերը, սակայն դա Թուրքիայի շահերից չի բխում, քանի որ պաշտոնական Անկարային ձեռնտու չէ քրդական միասնական պետության ստեղծումը: Ի պատասխան թուրքական հրթիռակոծությունների՝ քրդերը երկրի մի շարք բնակավայրերում հարձակումներ են իրականացնում զինվորականների, ուժային այլ կառույցների ստորաբաժանումների վրա: Դրան զուգահեռ՝ պայթեցնում են նաեւ էներգակիր ենթակառուցվածքները, որը բավական նյութական կորուստներ է պատճառում թուրքական պետական բյուջեին:

Ինքնության ճգնաժամն ու ստեղծված ներքաղաքական իրավիճակը, արդի աշխարհաքաղաքական զարգացումները լուրջ հարված են հասցնելու Թուրքիայի պետական ու վարչական կառուցվածքին, որի արդյունքում՝ տասնամյակներ հետո աշխարհի քաղաքական քարտեզի վրա Թուրքիան այս նույն տարածքներով ներկայացված չի լինելու, այլ բաժանված է լինելու առանձին պետությունների: Թե ինչ կոր պետականություններ կծեւավորի, ցույց կտա ժամանակը: Սակայն, ակնհայտ է մի բան՝ այդ պետականությունների շարքում լինելու է նաեւ Թուրքիան, բայց ավելի փոքր տարածքով ու կարողություններով:

Հ. ԱՎԱՆԵՍՈՎ

### Կրծքի վրա իրավունք չունեն մեղալներ կրելու, եթե սրտիդ մեջ հայրենիքդ չէ. կին գատամարտիկ



Առաջին անգամ, երբ նրան տեսա, երզում էր: Ժողովրդական հին երգերից մեկն էր երգում: Նուրբ ու հաճելի ձայն ուներ: Գեղեցիկ էր, կանացի: Ասաց, որ երգել շատ է սիրում, բայց երաժշտական կրթություն չունի. մասնագիտությամբ բուժքույր է: Դեռ ընկերուհին միացավ մեր գրույցին. «Պատերազմի ժամանակ էլ եր երգում,- ասաց,- զինվորները սիրում էին նրա երգը...»: Այդպես իմացա, որ Ռայա Դանիելյանն իր մասնակցությունն է բերել Արցախյան պատերազմին: Ընկերուհին հորդորեց, որ պատմի, եւ նա, ճիշտ է կցկտուր, բայց մի քանի բան պատմեց, իսկ ընկերուհին լրացնում էր նրան՝ պատմելով տիկին Ռայայի անցած ուղու եւ մարտական կենսագրության մասին:

Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, երեք երեխաների եւ ամուսնու հետ ապրում էին Երեւանում: Զկարողացավ անտարբեր լինել իր ծննդավայրի ճակատագրին. հորդորեց ամուսնուն, որ գնան Արցախ: Վերջինս մեր-

ժեց, եւ տիկին Ռայան երեք երեխաների հետ շտապեց Արցախ: «Որտեղ իմ հայրենակիցներն են, այնտեղ էլ իմ տեղն է: Ինչով կարող եմ՝ կօգնեմ. կգնամ մարտադաշտ, բուժքույր կլինեմ», - հայտարարեց: Իմանալով, որ եթե ամուսնուն թողնի ու մեկնի Արցախ, էլ հետդարձ չի լինի, նա, այդուհանդերձ, ընտրեց հայրենիքը...

Ռայա Դանիելյանը ծնվել է Աղբթեշանի Մինգիչաուր քաղաքում, իսկ ծնողներն արմատներով Մարտակերտի շրջանի Զաթերք գյուղից են: 7-րդ դասարանի աշակերտուհի է եղել, երբ ծնողների հետ տեղափոխվել են Զաթերք, որտեղի դպրոցում էլ ուսումը շարունակել է: «Ծնողներս ուզում էին, որ մենք իրենց հայրենի գյուղում մեծանանք, հայրենիքի օղջ շնչենք, ու դրա համար էլ որոշեցին վերադառնալ գյուղ», - ասում է նա:

1971 թվականին Ռայա Դանիելյանն ընդունվել է Երեւանի բժշկական համալսարանի մանկաբարձական բաժինը: Ուսումն ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Մարտակերտում, այնուհետեւ ամուսնացել ու հաստատվել է Երեւանում:

«1988 թվի բռնն օրերն էին: Ցավ էի ապրում, ուզում էի լինել հայրենակիցներին կողքին, բայց գիտեի, որ ամուսինս չի ընդունի, կընդդիմանա: Ինչով կարողանում էի՝ Երեւանից օգնում էի: Դեռ սկսվեց ազատագրական պատերազմը: Զաթերքն անընդհատ ռմբակոծում էին, երկու եղբայրներս մարտադաշտում էին: Չէի կարողանում հանգիստ նստել, քնել էի լինում, ուշք ու միտքս իմ գյուղում էր, Արցախում: Դեռուստատեսությամբ ու ռադիոյով ոչ մի բան բաց չէի թողնում Դարաբաղի վիճակի մասին: Անընդհատ հաղորդում էին նոր գոհերի ու վիրավորների մասին, բուժքույրերի կարիք կար խիստ: Ու մի գիշեր որոշում կայացրի՝ պիտի երեխաներիս հետ գնամ Արցախ, պիտի լինեմ մարտադաշտում, ինձ նմանների կարիք կա այնտեղ:

Ամուսինս առարկեց, ասաց, որ ինքը ինձ չի հետեւի ու եթե գնամ, էլ հետդարձ չի լինելու, ես, այնուամենայնիվ, շտապեցի Արցախ...», - տիկին Ռայան կանգ է առնում, նայում աչքերին, ապա հարցնում՝ իսկ եթե դու լինեիր ի՞նչ կանեիր: «Զգիտեմ...», - թողնում եմ ուսերս: «Հայրենիքն ամեն ինչից վեր է, - ասում է, - հատկապես, երբ այն վտանգի մեջ է...»:

1993-ին երեք երեխաների հետ Ռայա Դանիելյանը գալիս է Զաթերք, երեխաներին թողնում ծնողների խնամակալությանը եւ շտապում օգտակար լինել վիրավոր զինվորներին: «Ցեխձորի դաշտային հոսպիտալում, որտեղ գլխավոր բժիշկը Սերգեյ Օհանյանն էր, ինձ ընդունեցին որպես բուժքույր: 15 օրը մեկ տեսակցում էի երեխաներիս, - պատմում է, - ապա ավելացնում, - համարյա ամեն օր վիրավորներ էին բերում: Ես շտապում էի նրանց արյուն տալ. գլխավոր բժիշկը հաճախ բարկանում էր՝ ասելով՝ այ աղջիկ, այդքան արյուն քեզ որտեղից. հերիք է, դու դեռ պետք ես քո երեխաներին...»:

«Ցեխձորից մեզ տեղափոխեցին Չլդրան: Մնացինք վրաններում, հետո՝ Մաղավուզ, Զոնաթաղ: Մարտակերտն ազատագրելուց հետո երեխաներիս հետ տեղափոխվեցի Մարտակերտ, մինչեւ 1999 թվականը ծառայեցի Մարտակերտի հրաձգային գումարտակում՝ որպես բուժքույր: Ամուսինս այդպես էլ չեկավ, Ռուսաստանում էր: 2000 թվականին երեխաներիս հետ տեղափոխվեցի Երեւան: Հիմա մշտական աշխատանք չունեմ, բայց մարդիկ ինձ ճանաչում են. երբ պետք է լինում՝ մեկ էլ տեսար գիշերն էլ են գանգում, շտապ կանչում առաջին օգնություն ցուցաբերելու համար: Ես, իհարկե, այդ ամենն անվճար եմ անում...»:

Տիկին Ռայայի որդին՝ հայրենիքում աշխատանք չգտնող ու պատճառով ստիպված եղավ որոշ ժամանակով մեկնել Ռուսաստան: «Որդուս ուղարկած գումարով ենք ապրում: Օրեր

եմ հաշվում՝ նրա վերադարձին սպասելով: Ախր, օտար հողում դժվար է ապրել: Դա քո հայրենիքը չէ, այնտեղ վանդակն ընկած թռչունի պես ես քեզ գզում: Ես ցավ եմ ապրում՝ տեսնելով այսօրվա Հայաստանը: Իմ ծանոթ բարեկամներից քանի-քանիսն են լքել երկիրը՝ սոցիալական պայմաններից դրդված: Ախր, մենք ուրիշ Հայաստան էինք ուզում, ախր մեր գոհված տղաների երազանքի Հայաստանն այլ էր... Ես չեմ ուզում, որ իմ, քո, նրա որդին ստիպված լինի լքել հայրենիքը: Մենք իրավունք չունենք...»:

«Երեխաներս մեկ-մեկ հարցնում են՝ մամ, որ պատերազմ լինի, դարձյալ կգնա՞ս: Կգնամ, իհարկե, կգնամ, եւ ձեր բոլորիդ պարտքն էլ է դա, բոլորդ էլ պետք է գնաք՝ պատասխանում եմ: Ես հավատում եմ այսօրվա երիտասարդությանը, - շարունակում է տիկին Ռայան, - հավատում եմ, որ նրանք կհասնեն այն Հայաստանին, որը մենք ու մեր տղաներն էին երազում: Հայրենիքը մի քանի հոգու սեփականություն չէ, հայրենիքն այն երիտասարդներինն է, ովքեր այսօր պայքարում են լավ Հայաստան ունենալու համար: Ես հավատում եմ նրանց...»:

Ռայա Դանիելյանը պատերազմի ավարտից հետո արժանացել է «Արիության» եւ «Վազգեն Սարգսյան» շքանշանների: «Մեղալները չեն, որ պիտի մարդու կուրծքը գար դարեն: Այդ մեղալների անունները երբեմն մոռանում էլ եմ: Հիմա մեղալներ ունեն նաեւ նրանք, ովքեր չգիտեն անգամ, թե արիությունն ինչ է: Դու իրավունք չունես կրծքիդ վրա մեղալներ կրելու, եթե սրտիդ մեջ հայրենիքը չէ...»:

Ու տիկին Ռայան երզում է. նրա երգը մերթ կորցրած սիրո մասին է, մերթ հայրենի լեռների, մերթ էլ այն գալիքի, որին ինքն է հավատում...

Հ. ԱՎԱԳՅԱՆ

### Մերուժան մոսիյան - 50

ԼՂՀ ՊԲ-ի եւ Մարտունու քաղաքապետարանի նախաձեռնությամբ սեպտեմբերի 7-ին Մարտունու մշակույթի տանը կայացավ հուշերեկը՝ նվիրված Արցախյան շարժման ու պատերազմի առաջամարտիկ, Մարտունու 26-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, ՀՀ Դաշնակցության գաղափարակիր Մերուժան Մոսիյանի ծննդյան 50-ամյակին:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը, ՀՀ ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը, ՀՀ ԿԿ անդամներ, ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավորներ Արմեն Սարգսյանը եւ Ալյոշա Գաբրիելյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, մարտական ընկերներ, հարազատներ եւ ուրիշներ:

Նախքան հուշ երեկոյի բացումը՝ ներկաներն այցելեցին ընկերոջ շիրիմին, որտեղ մատուցվեց սուրբ պատարագ եւ հարգանքի տուրք՝ Արցախյան ազատամարտում զոհված մարտունեցիների հիշատակին:

Այնուհետեւ Մարտունու մշակույթի տանը տեղի ունեցավ հուշ-երեկո:

Ելույթով հանդես եկավ 26-րդ գումարտակի շտաբի պետ Վոլոդյա Ավանեսյանը եւ նշեց, որ Մերուժանը, լինելով պատմության ֆակուլտետի ուսանող, շատ լավ հասկանում էր իրավիճակի իսկությունը. նա գիտեր, որ պատերազմն այնքան անխուսափելի է, եւ ընկերների հետ անցավ ընդհատակյա գործունեության:

«Դասերից հետո նա տուրիզմի խմբակ էր պարապում՝ դեռ այն ժամանակ գիտակցելով, որ երիտասարդները պետք է կարողանան զենքին տիրապետել, գոյատևել դրսի պայմաններում, պատերազմական իրավիճակում:

կում: Այն ժամանակ արդեն ինքը հասկանում էր, որ լայնամասշտաբ պատերազմն անխուսափելի է, որ առանց զենքի հարցը լուծում չի ստանա...», - ասաց Վոլոդյա Ավանեսյանը:

Սրտի խոսքով հանդես եկավ Մերուժանի կուսակից ու մարտընկեր Մասիս Սուլեյմանյանն ու նշեց, որ Մերուժանի վերջնական նպատակն Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանն էր, եւ հանուն այդ նպատակի նա չխնայեց իր կյանքը:

«Մերուժանը, անդամագրվելով հայության



արդարադատության դատին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը, որդեգրել էր «Ազատություն կամ մահ» կարգախոսը: Արտաքուստ լինելով համեստ երիտասարդ՝ ազնվական մի ոյուցագուն էր, ով պատրաստ էր սարեր շուռ տալ, - ասաց Մասիս Սուլեյմանյանը, - պատահականություն չէր, այլ՝ օրինաչափություն՝ նրան 26-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատար նշանակելը: Նա առաջնորդ էր...»:

Մերուժան Մոսիյանի ծննդյան 50-ամյակին նվիրված միջոցառմանը ներկա էր նաեւ նրա ուսուցիչ եւ դասղեկ Գեորգի Մեւիկյանը, ով խոսեց Մերուժանի դարոցական տարիների մասին եւ նշեց, որ նա իր բնավորությամբ ու վարքով մեծ հեղինակություն էր վայելում դպրոցում:

«Մերուժանը շատ ընդունակ էր, կարող էր մի քանի օրում դասագիրքն անգիր անել: Նա իր նպատակին հասնելու անկողում կամք ուներ, - նշեց դասղեկը եւ ավելացրեց, - Մերու-

ժանը միշտ շտապում էր, նա միշտ միլիոն գործ ուներ. շտապում էր, որպեսզի առաջիններից մեկը հասներ այնտեղ, որտեղ պետք էր, շտապում էր իր կյանքն անխնայ կորցրելու հանուն հայրենիքի, հանուն ազգի, հանուն արդարացի պայքարի...»:

Ելույթ ունեցավ նաեւ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը եւ նշեց, որ Մերուժանն իր գործունեությամբ, իր ներդրումով մեր ազատամարտի մեջ կարողացել է մեզ բոլորիս պարտադ-

րել գործել:

Իսկ Մերուժան Մոսիյանի եղբայրը՝ Արթուր Մոսիյանը, ով երբոր զոհվելուց հետո ստանձնեց 26-րդ գումարտակի հրամանատարությունը, նշեց. «Այսօր ես իմ խոսքով կներկայացնեմ հաշվետվություն... Մերուժանի՝ 26-րդ մոտոհրաձգային գումարտակը ամբողջ պատերազմական գործողությունների ընթացքում ոչ միայն 10 կմ ավել պետական սահման է պաշտպանել, այլ այն ՊԲ այնպիսի մարտունակ գումարտակներից մեկն էր, որը երբեմն իր մարտական խնդիրները կհաստատի կատարելով, - նշեց Արթուր Մոսիյանը՝ ավելացնելով, որ գումարտակի հրամանատարից շատ բան է կախված, բայց կարելու է նաեւ գումարտակի անդամների գործը, ովքեր տարածության ու ժամանակի մեջ պատվով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները»:

«Այսօր մարտական եւ մարտավարական խնդիրները լուծված են, լուծվել է նաեւ ռազմավարական խնդիրը: Սահմանում կանգնած են անկախության սերնդի ներկայացուցիչներ. սա նշանակում է, որ վերադարձ անցյալին չկա, եւ ներկա սերունդը ոչ միայն կպաշտպանի, այլ նաեւ հնարավորության դեպքում արած գործը կբազմապատկի, - շեշտեց Ա. Մոսիյանը, - մեր հերոս նահատակները անմահանում են միայն երկու դեպքում՝ երբ նրանց գործը շարունակում են եւ երբ նրանց հիշում են: Մեր հիշողությամբ ու գործով շարունակենք ապրեցնել մեր նահատակ հերոսներին: Ծունդը շնորհավոր, հրամանատար»:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց Մ.Մոսիյանի մասին պատմող տեսաֆիլմ, եւ ազգային, հեղափոխական երգերով հանդես եկան ԼՂՀ ՊԲ «Ասպետ» համույթն ու արցախյան երգիչ Ռաշիդ Բաբայանը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

### «Սոսե» մանկապարտեզի նոր շենքի սպասումով



թյունյանի հետ: - **Տկն Հարությունյան, ի՞նչ ակնկալիքներ ու ծրագրեր կան մանկապարտեզի շենքի հետ կապված:**

- Ուրախացնեմ ու հայտարարեմ սպասողներին, ովքեր մտահոգվել են մանկապարտեզի քանդման հարցով. հոկտեմբերի 1-ից մանկապարտեզը գործելու է ժամանակավոր տեղակայված վայրում՝ Նախկին 6-րդ դպրոցի մասնաշենքերից մեկում:

Արցախում ՀՀ-ի բազմաթիվ հաջողված ծրագրերից մեկը «Սոսե» մանկապարտեզների ծրագիրն է: Այսօր Արցախում գործում են ՀՀ-ի 8 մանկապարտեզներ: Ստեփանակերտ քաղաքում մանկապարտեզը գործում է 1998-ից:

Ուրախությամբ տեղեկացնեմ նաև, որ 2015 թվականին ՀՀ-ի Կենտրոնական վարչությունը Ստեփանակերտում նոր մանկապարտեզի շինարարության նպատակով կյանքի է կոչել հանձնախումբ, որին անմիջապես արձագանքել է ՀՀ կառավարությունը և իր պատրաստակամությունը հայտնել միասնաբար այդ ծրագիրը կյանքի կոչելու համար:

ՀՀ-ի կառույցը համագործակցում է ՀՀ կառավարության և Ստեփանակերտի քաղաքապետարանի հետ, ինչը բխում է մեր քաղաքացիների շահերից: Մանկա-

պարտեզն այդ տարածքում կգործի առավելագույնս 2 տարի: Իրավիճակի բերումով Արցախ այցելած հազարավոր ՀՀ-ուհիներ՝ թե՛ Կենտրոնական վարչությունից, թե՛ առանձին ՀՀ-ուհի բարերարներ, միշտ այցելել են Ստեփանակերտի մանկապարտեզ և իրենց անկեղծ ցանկությունն են հայտնել՝ արդիական պահանջներով հագեցած մանկապարտեզի շենք կառուցելու:

Նորակառույց մանկապարտեզի շենքի նախահաշիվը կազմում է մոտավորապես 900 000 դոլար, որից մոտ 750 000 դոլարը նախատեսվում է շինարարության ծախսերի համար: Այս պահին ՀՀ-ի տարբեր կառույցներ ԱՄՆ-ում, Կանադայում և ամենուր նախաձեռնել են դրամահավաք՝ շինարարությունն արագ ավարտելու նպատակով: Արցախի մեկուսի կառույցն անմասն չի մնալու, և նպատակ ունի նախաձեռնելու տարբեր դրամահավաք միջոցառումներ իր արտահայտված մասնակցությունը բերելու համար:

- **Ինչքա՞ն է կազմում այդ արտահայտված մասնակցության չափը:**

- Իհարկե, ինչքան շատ՝ այնքան լավ, բայց ոչ պակաս, քան 100 000 դոլարի համարժեք դրամ: Օգտվելով առիթից՝ կոչ եմ անում «Ապառաժ» թերթի ընթերցողներին՝ իրենց մասնակցությունը բերելու այս ծրագրի կյանքի կոչմանը: Ցանկացողները գումարը կարող են փոխանցել հատուկ բացված բանկային հաշվին,

հեռ. +374 97 248477/1570022424910100

/AMD/ 1570022424910101/USD/: «Ամերիա-բանկ» ՓԲԸ Ստեփանակերտ մասնաճյուղ:

ՀՀ-ը ստեղծվել է 1910թ. ԱՄՆ-ում, ցեղասպանություն տեսած հայ կանանց և մայրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով, և գործում է աշխարհի 26 երկրներում. իսկ Արցախում գործում է 1992 թվականից:

1998 թվականի ապրիլին Ստեփանակերտում բացված ՀՀ-ի «Սոսե» մանկապարտեզը նպատակ ուներ աջակցել Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքների մանկահասակ երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը:

«Սոսե» մանկապարտեզը շատ կարճ ժամանակում աչքի ընկավ ՀՀ նախադպրոցական հիմնարկների շարքում և դրանով իսկ արդարացրեց ՀՀ-ի Կենտրոնական վարչության և հովանավորող շրջանների, անհատների սպասումներն ու հույսերը:

Հետագայում Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի օրինակով որոշվեց ընդլայնել «Սոսե» մանկապարտեզների ցանցն Արցախում՝ տարիների ընթացքում նրանց թիվը հասցնելով 12-ի:

Այժմ մանկապարտեզներ են գործում նաև Շուշիում, Մեծ Թաղերում, Տողում, Ակնաբերդում, Աշանում, Կնճրիստանում, Զարեհում:

Հարցազրույցը՝ **Լուսինե ԹԵՎՈՅԱՆԻ**

### Միշտ պատրաստ ենք մեր օժանդակությունը ցուցաբերել հերոսական Արցախին. Մարալ Մասերեջյան



2006 թվականից Լիբանանի ՀՀ կառույցի «Արցախ ֆոնդ» կազմակերպությունը սկսեց գործել Արցախի՝ հիմնականում վերաբնակեցված և ազատագրված շրջաններում:

Անցած 9 տարիներին Զառաթաղի շրջանի մի քանի հարյուր ընտանիքներ օգտվել են «Արցախ ֆոնդ»-ի «Նոր կյանք՝ նոր հույս» ծրագրից: Վերջերս հերթական այցով Արցախում էին «Արցախ ֆոնդ»-ի ներկայացուցիչները: Եկել էին իրականացնելու նոր հատկացումներ և նախորդ տարվա ծրագրի ստուգումներ: Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում «Արցախ ֆոնդի» ներկայացուցիչ Մարալ Մասերեջյանի հետ մեր թղթակցի հարցազրույցը:

- **Ո՞րն է «Նոր կյանք՝ նոր հույս» ծրագրի հիմնական նպատակը:**

- Հիմնական նպատակն է՝ օգնել Արցախի, հատկապես ազատագրված և վերաբնակեցվող տարածքների՝ երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին՝ իրենց դիմումի համաձայն անհատույց տրամադրելով կթան-

կով՝ երեք տարի այն չմոռոթելու և չվաճառելու պայմանով: Անցած տարիներին մոտ 800 ընտանիք օգտվել է այս ծրագրից:

- **Այս անգամ դուք եկել եք համեմատաբար մեծ խմբով՝ 6 հոգով. ո՞րն է պատճառը:**

- Ինձ հետ Արցախ են ժամանել 5 կամավորականներ՝ Վարդան Մամիկոնյան, Հակոբ Թիրգյան, Գեորգ Պասամյան, Մկրտիչ Սարգիսյան և Վազգեն Յակոբյան՝ Լիբանանի տարբեր շրջաններից: Այս տարի աշխատեցինք 2 խմբով. 3 հոգի՝ Զառաթաղում, երեքը՝ Շահումյանի, Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջաններում: Մեկ շաբաթվա ընթացքում հասցրեցինք 165 ընտանիքների հատկացնել անասուններ: Որոշ ընտանիքների, իրենց ցանկությամբ, հատկացվել է մանր եղջերավոր անասուն, խոզ: Այս անգամ Զառաթաղի շրջանում մեր ծրագրից օգտվեցին մոտ 107 ընտանիք, իսկ մնացած շրջաններում՝ ընդհանուր 58 ընտանիք: Անցած ծրագրով 4 ընտանիք անասուն չէր ստացել. այս անգամ նրանք նույնպես օգտվեցին ծրագրից:

- **Ինչպե՞ս է իրականացվում դրամահավաքը, որն ուղղվում է «Արցախ ֆոնդ»-ի ծրագրերի իրականացմանը:**

- Յուրաքանչյուր տարի մայիսի 9-ին Լիբանանի հայկական ռադիոյի միջոցով կազմակերպվում է հանգանակություն, և շատերը հատկացումներ են կատարում մեր ֆոնդին: Ուրախալի է, որ Լիբանանի ողջ հայությունն է մասնակցում հանգանակությանը, նույնիսկ՝ դպրոցականները: Բացի այդ, տարվա ընթացքում ՀՀ օրգան «Ազդակ» օրաթերթի միջոցով տրվում են հայտարարու-

թյուններ: - **Ովքե՞ր են կամավորականները, որ մասնակցում են այս աշխատանքներին Արցախում:**

- Լիբանանի տարբեր շրջաններից ՀՀ անդամները, հաճախ՝ նաև համակիրներ, ովքեր այդ հարցով դիմում են ՀՀ Կենտրոնական կոմիտեին: Կոմիտեն որոշում է, թե ով պիտի մասնակցի: Կամավորների գործունեության ծախսերը հոգում է ՀՀ կառույցը: Յուրաքանչյուր տարի նոր մասնակիցներ են գալիս Արցախ: Այս անգամ էլ՝ բացի Վարդանից, մնացածն առաջին անգամ են հայրենիքում: Այս, որ նրանց համար մեծ փորձություն է լինել Արցախում և մասնակցել նման դժվար, բայց պատասխանատու և հայրենակներ աշխատանքների: Տղաներն արդեն մեկնել են Արցախից: Նրանք ոգեւորված էին, և ցանկություն հայտնեցին նորից մասնակցել ծրագրի աշխատանքներին:

- **Բացի անասուն հատկացնելուց, ուրիշ ինչպիսի՞ գործունեություն է իրականացնում «Արցախ ֆոնդ»-ը մեր երկրում:**

- Մենք իրականացնում ենք նաև «Գույք Արցախի դպրոցներին» ծրագիրը՝ դպրոցներին հատկացնելով որոշակի գույք և համակարգիչներ: Մոտ 10 դպրոց, այդ թվում՝ նաև Զառաթաղի շրջանի Կոլսական քաղաքի Թ. Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցն այսօր մեր օժանդակությամբ ունեն համակարգչային կաբինետներ: Համագործակցելով Արցախի կրթության և գիտության, նաև պաշտպանության նախարարությունների հետ՝ յուրաքանչյուր տարի լիբանանահայ մի քանի տասնյակ դպրոցականներ են մասնակցում «Ասպետ» ռազմամարզական ճամբարին (այս տարի մասնակցել են 16 հոգի): Այստեղ Լիբանանից եկած հայ տղաները ծանոթանում են արցախի իրենց հասակակիցներ-

րի հետ, ընկերանում, այցելում են Արցախի տարբեր վայրեր, ճանաչում հայրենիքը: Կովսական քաղաքում իրականացնում ենք «Կանանց համագործակցություն» ծրագիրը: Մեր հատկացրած նյութերով կանայք ձեռքի աշխատանքներ են ստեղծում, որոնցով Լիբանանում կայանում է ցուցահանդես-վաճառք, և գումարը հատկացվում է նրանց:

Կովսականում գործող «Թաթուլ» ազգագրական երգի-պարի համույթին հատկացրել ենք միկրոավտոբուս, երաժշտական սարքավորումներ:

- **Ինչպե՞ս է օժանդակում շրջանի ղեկավարությունը ծրագրի իրագործմանը:**

- Բնական է՝ մեծ է աջակցությունը շրջվարչակազմի ղեկավարի և այլ պատասխանատուների կողմից: Մեզ տրամադրվում է մեքենա, վառելիք՝ գյուղեր մեկնելու համար: Ցանկալի է, որ համայնքների ղեկավարներն էլ սիրով օգնեն մեզ: Որոշ համայնքներում մեզանից պահանջում են անասունի գումարը հատկացնել ընտանիքին, սակայն մեր այստեղ գալու հիմնական նպատակն է, որ անձամբ զենք կենդանի և հատկացնենք տվյալ ընտանիքին, իսկ գումարը վաճառողին է հասնում բանկի միջոցով:

- **2016 թվականին քանի՞ ընտանիք պետք է օգտվի այս ծրագրից:**

- Երեք և ավելի երեխա ունեցող, մեր ծրագրից չօգտված ընտանիքների ցուցակը մեզ հատկացնում է պետությունը, և ուրախ ենք, որ ավելանում է երեխաների թիվը: Շուտով կճշտվի նոր ընտանիքների քանակը, և մենք միշտ պատրաստ ենք մեր փոքր օժանդակությունը ցուցաբերել հերոսական Արցախին, ազատագրված հայրենիքում բնակություն հաստատած մեր հայրենակիցներին:

Հարցազրույցը՝ **Չոհրաբ ԸՈՔՈՅԱՆԻ**

### Ամենահաջողված ստեղծագործությունս ընտանիքս է



ու տպավորությունները հավաքում է իր մեջ, խմորում եւ դա արտահայտում իր ստեղծագործություններում, դրանով իր ասելը հայտնում աշխարհին»,- ասում է Արտակը: «Դեմքը շատ բան է արտահայտում, միայն պետք է կարողանաս այն ըմբռնել եւ վերարտադրել»:

Արտակ Պողոսյանը ծնունդով Մարտունու շրջանի Դավախան գյուղից է: Երբ սկսվեց Արցախյան գոյապայքարը, ընդամենը 17 տարեկան էր, սակայն եղավ այն առաջիններից, ովքեր մարտի նետվեցին: Նա առանց երկմտելու անդամագրվեց հայրենիքի պաշտպանությանը՝ որպես տանկիստ մասնակցելով Ակնայի /Աղզամի/ կռիվներին եւ Մարտակերտի շրջանի ազատագրմանը:

«Պատերազմի ընթացքում ազատ ժամանակ համարյա չէր լինում, իսկ եթե լինում էր, ապա թեկուզ մի քանի րոպեով տրվում էր նկարչությանը,- ասում է Արտակը եւ ավելացնում,- այդ տարիներին իմ միակ երազանքն այն էր, որ եթե պատերազմն ավարտվի եւ ես ողջ մնամ, ապա անպայման պետք է նկարչություն ուսանեմ եւ նկարիչ դառնամ»:

Տասնը, որի մեջ Արտակն էր, պատերազմի ընթացքում մի քանի անգամ ռմբակոծվել է: Չինական զորքերը կնքելուն 10 օր մնացած՝ տանկը 3-րդ անգամ ռմբակոծման ենթարկվեց, ինչի հետեւանքով ուղեղի սուր ցնցում ստացավ, նաեւ՝ ոտքի եւ կողքի վնասվածներ:

Չորացրվելուց հետո Արտակին մեկ տարի պահանջվեց, որպեսզի փոքր-ինչ ապաքինվի: Մի հիվանդանոցից մյուսն էր անցնում: Յետո նա տեղափոխվեց Շուշի եւ, ընդունվելով Մշակութա-լուսավորական տեխնիկումի նկարչական ֆակուլտետը՝ իրականություն դարձրեց իր՝ նկարիչ դառնալու երազանքը:

«20 տարեկանում ես ընդունվեցի Շուշիի տեխնիկումը՝ անգամ չմտածելով, որ իմ ապագան կկերտեմ Շուշիում,- անկեղծանում է Արտակը եւ նշում,- ուսումնասիրելով Շուշի քաղաքի պատմությունը? հասկացա, որ գնալով հիանում ու սիրահարվում եմ այս քաղաքին: Հասկացա, որ մենք շատ անտարբեր ենք այս հինավուրց ու հաղթական քաղաքի նկատմամբ, այս ավերակ դարձած, բայց կյանքով լեցուն քաղաքի նկատմամբ: Ինձ մոտ այն զգացողությունն էր, որ եթե ես թողնեմ ու հեռանամ Շուշիից, ապա դավաճանած կլինեմ ինձ հարազատ ինչ-որ մեկին...»,- ասում է:

«Եթե մարդու մեջ կա հայրենասիրություն, այն երբեք չի մահանում: Եթե նախկինում ինչ-որ գործ ես արել հայրենիքի համար, իսկ այժմ չես նպաստում նրա բարօրությանն ու շենացմանը, ուրեմն նախկին արածդ կեղծ էր: Չեմ հասկանում այն մարդկանց, ովքեր թողնում եւ հեռանում են ռուսաստաններ»,- ասում է Արտակը եւ մեջբերում Գարեգին Նժդեհի՝ «Հայրենիքից դուրս խաբուսիկ են բոլոր դրախտները» խոսքերը:

Ուսումն ավարտելուց անմիջապես հետո տեխնիկումի տնօրենի առաջարկով դասավանդել է նկարչություն: «Ճիշտն ասած՝ դժվար եմ հարմարվել այն իրողությանը, որ դեռ նորավարտ, բայց պետք է արդեն դասավանդեմ: Միաժամանակ ե՛ւ հայարտություն էի զգում, ե՛ւ մտավախություն»,- ասում է նա:

Մի քանի տարի հետո Արտակն ընդունվել է Շուշիի «Գյուրջյան» կիրառական արվեստների ինստիտուտը: Տեխնիկումում ծանոթացել էր ապագա կնոջ՝ Մարինեի հետ: «Ես արդեն դասավանդում էի, երբ Մարինեն ընդունվեց մեթոդիկայի բաժինը: Միանգամից հավանեցի այդ կնեսսախիղ ու բարի աղջկան եւ սիրահարվեցի»,- ասելով պատմում է

Արտակը: Արտակի պատմելով՝ երբ ամուսնացան տան ընտրության հարցը տեւեց մի քիչ երկար:

«Մենք ուզում էինք, որ մեր տունն անպայման Շուշիի հին տներից լիներ: Այստեղ աստվածային հանգստություն է տիրում, որը ձգում է մեզ: Եթե մենք բազմաբնակարան շենքում ապրեինք, կարծում եմ՝ հարյուր տարի մի գիծ չէի կարողանա նկարել,- նշում է Արտակը եւ ավելացնում,- տանս վրա դեռ շատ գործ կա անելու, բայց իմ տան ճոխությունը ոչ մի բանի հետ չեմ փոխի: Միայն իմ արվեստանոցի առաստաղը ունի 4,20 մ բարձրություն»,- հպարտությամբ պատմում է:

Արտակն ու Մարինեն երկու զավակ ունեն՝ տղա եւ աղջիկ: «Աղջկաս անունն Արեւիկ է, որովհետեւ ծնվելու օրը երկինքն ամպամած էր եւ անձրեւը ուր որ է պիտի սկսվեր, բայց հենց ծնվելու պահին արեւ ծագեց, եւ բժիշկները կնոջս թույլտվությամբ որոշեցին աղջկաս անունն Արեւիկ դնել»:

Արեւիկը շատ է սիրում նկարել, եւ իր վերջին նկարած նկարը աշխատող հայրիկի նկարն է: Դա նրա ամենասիրած նկարն է:

Արտակը երբեք անհատական ցուցահանդես չի կազմակերպել: Ասում է. «Անհատական ցուցահանդեսը քննություն է, որտեղ չպետք է վատ գնահատական ստանաս: Ես դեռ պատրաստ չեմ դրան...»:

«Արվեստը փրկության դուռ է մարդու համար: Այն օգնում է լինել ավելի լավը, անել միայն լավը: Արվեստագետին ընդունում եւ սիրում են այն ժամանակ, երբ նա կարողանում է ապրել ընդհանուրի ցավով, եւ նկարելը նրա համար միայն եկամտուտի աղբյուր չպիտի լինի: Սա է իմ բանաձեւը»:

L. ԹԵՎՈՍՅԱՆ

### Խաչվերաց-Սբիւէջ

Տոնն ունի վաղ հեթանոսական ակունքներ: Ուլը միակ կենդանին էր, որ ուտում եւ փչացնում էր խաղողի վազը, այդ պատճառով էլ այս տոնին ուլ են մորթել եւ թնրում խորովել: Այստեղից է առաջացել նաեւ «քաչվերացի նոխազ» արտահայտությունը: Հայ Առաքելական Եկեղեցին Ս.Խաչին նվիրված չորս տոն ունի՝ Ս. Խաչի երեւում, Խաչվերաց-Սբիւէջ, Խաչի գյուտ եւ Վարագա Ս. Խաչ: Զրիստոնեական մնացած եկեղեցիները եւս ունեն խաչին նվիրված առաջին երեք տոները, իսկ Վարագա Ս. Խաչի տոնն ազգային է եւ նշում է միայն Հայաստանյայց Եկեղեցին: Խաչվերացը Հայ Եկեղեցու տաղավար տոներից վերջինն է:

Ինչպես բոլոր տաղավար տոներին, այնպես էլ Խաչվերացին հաջորդող երկուշաբթին մեռելոց հիշատակի օր է:

Խաչվերացի տոնը հաստատված է Տիրոջ խաչափայտի վերադարձը Երուսաղեմ պանծացնելու եւ միաժամանակ խաչի գործունեությունը ներբողելու համար:

Հայոց Եկեղեցին Խաչվերացը տոնում է սեպտեմբերի 11-17-ը հանդիպող կիրակի օրը: Այս տոնի արարողակարգը ձեւավորել է Սահակ Չորոփորեցի կաթողիկոսը (կթղ.677-703թթ.), նաեւ այդ առիթով գրել է երգվող շարականները՝ «Այն մեզ բոլոր փորձություններից կպահպանի» խորհուրդով ու մտածումով:

610թ. հզորության գագաթնակետի հասած Պարսկաստանի Խոսրով թագավորը հարձակվում է բյուզանդական Հերակլ կայ-

սեր վրա: Պարսկական զորքերը Խոռեմ գործարի գլխավորությամբ 614թ. ներխուժում են Երուսաղեմ: Չինվորները շատերին սրի են քաշում եւ շատերին էլ գերեվարում: Գերիների թվում էր Չաքարիա Խայրապետը: Պարսիկները մտնում են նաեւ Ս.Հարություն տաճար ու գերում Ս. Խաչը: Զրիստոնյաները, զրկվելով այս սրբությունից, հայտնվում են այնպիսի անմխիթար վիճակում, ինչպիսի վիճակում ժամանակին հայտնվել էին հրեաները, երբ փոշտացիները գերել էին Աստծո Ուխտի տապանակը: Սակայն Տիրոջ Խաչը հայտնվելով Պարսկաստանում՝ մեծ փառքի է արժանանում: Տեղաբնիկները փրկչական խաչին վերաբերվում են մեծ երկյուղածությամբ եւ ասում, որ քրիստոնյաների Աստվածն իրենց մոտ է եկել: Ծառերն ակից դիմում են այդտեղի քրիստոնյաներին, եւ նրանցից լսելով Ավետարանի խոսքը՝ ընդունում քրիստոնեություն: Այնուհետեւ Հերակլ կայսրը, որպեսզի պատերազմում հաղթի Խոսրովին, իրեն օգնության է կանչում Ճեսայ Խանակ թագավորին: Հերակլին աջակցում էր նաեւ հայկական զորքը՝ Մծեժ Գնունու գլխավորությամբ: Սակայն այս անգամ էլ Խոսրովը հաղթում է Հերակլին: Այդ պարտությունից հետո կայսրը հանում է իր թագն ու թագավորական ծիրանին, եւ քուրճ հագնելով՝ նստում մոխրի վրա ու երեք օր շարունակ աղոթում՝ բարեխոս ունենալով ս. Մարիամ Աստվածածնին: Չորրորդ օրը նրան տեսիլքով հայտնվում է, որ հաղթելու է: 627թ. (որոշ աղբյուրներում նշվում է

628թ.) տեղի ունեցած ճակատամարտում Հերակլը հաղթում եւ ազատում է Տերունական խաչափայտը: Սկզբում խաչը Պարսկաստանից հանդիսավոր թափորով փոխադրվում է հայոց Կարին քաղաքը, ապա՝ Պոլիս, իսկ հետո՝ Երուսաղեմ: Վերադարձի ճանապարհին խաչը գրեթե ամեն տեղ բարձրացվում է եւ ամենուր ցնծություն առաջացնում, որը կարծես Զրիստոսի հարության վերակերպումն էր խորհրդանշում: Խաչափայտի՝ Կարին քաղաքում լինելու պատճառով է, որ Կարին դաշտի հարավարեւելյան կողմում բարձրացող լեռների մեծ գագաթն այսուհետ «Խաչափայտ» է կոչվում: Տեղական ավանդության համաձայն՝ պարսիկները Խաչը հանձնելուց հետո փորձում են այն հետ վերցնել: Հայերը, Խաչափայտը հանգրվանի տեղում թողնելով, պարսիկների հարձակումը հետ են մղում, եւ վերադառնում են, տեսնում, որ խաչի որված տեղում վճիտ աղբյուր է բխում, որը եւ դառնում է ուխտատեղի:

Պատմության ամենադաժան ու անհուսալի հայրերն ապավինեցին խաչի զարմանահրաշ գործությանը, եւ այդ գործությունը հայրենիքի պաշտպանության համար մղված բոլոր մարտերում՝ Ավարայրից մինչեւ Սարդարապատ եւ Արցախ: Խաչն ու նրանով սրբազորված մեր հավատը պահեցին, պահպանեցին ու մոխիրներից վերհանեցին մեր ժողովրդին: Այսօր վերստին փայլում է Խաչը մեր հոգում եւ մեր Մայր Եկեղեցում, եւ տա Աստված, որ մենք տեսնենք այն ու

զորանաք նրանով, որպեսզի Խաչը լուսավորի ճանապարհն այժմ եւ հավիտյան:

**Ուխտի տապանակ** - այս անունով է կոչվել այն նվիրական արկղը, որի մեջ էին պահվում օրենքի տախտակները, որոնք Աստծո եւ Իր ժողովրդի միջեւ կնքված ուխտի վկայությունն էին: Նրա մեջ էին պահվում նաեւ Ահարոնի ծաղկած գավազանը, ոսկե սափորի մեջ դրված մանանան, ինչպես նաեւ մի օրինակ Մովսեսի Հնգամատյանից: Այն դրվում էր սրբություն սրբոցում, ուր անտեսանելիորեն ներկա էր Աստված եւ բազում անգամ հայտնում էր Իր կամքը: Անապատով ընթանալիս ուխտի տապանակը քահանաները տանում էին ժողովրդի առջեւից: Նրա հետ կապված են բազմաթիվ հրաշքեր. այսպես՝ նրա առջեւ կանգնեցին Հորդանանի ջրերը՝ ճանապարհ տալով Իսրայելի ժողովրդին. տապանակով հանդերձ Երիզովի շուրջ 7 անգամ պատվելուց հետո փվեցին քաղաքի պարիսպները. իսկ երբ փոշտացիները գերեվարեցին այն, շուտով ետ վերադարձվեց աստվածառաջ հարվածով:

Ուխտի տապանակն անհետ կորավ բաբելոնյան գերության ժամանակ՝ հավանաբար ծածուկ տեղ պահվելով բարեպաշտ հրեաների կողմից:

**Թագավորական ծիրանի** - թագավորի հագուստ:

**Զուրթ** - այժի մազից պատրաստած կրոնավորի զգեստ:

Պատրաստեց Հովհիկ ԱՎԱՆԵՍՏՆԻԿ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ  
Ստեփանակերտ, Կոնստանյան 17,  
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com  
Կայքէջ՝ [www.aparaj.am](http://www.aparaj.am)

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արձարձված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ